# ՈՐՏԵ՞Ղ ԵՆՔ ՄԵՆՔ ԳՏՆՎՈՒՄ.
# ՀԱՅԱՍՏԱՆՈ՞ՒՄ, ԹԵ՞ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

/ Բովանդակություն/

1. ԴԱՐԱՎՈՐ ԿԵՂԵՔՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԻՐԱՎԱԶՈՒՐԿ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՏՈՀՄԻԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԻ (նկարագրի, հոգեբանության և մտածելակերպի) ՎՐԱ

2. ԵԹԵ ԱԶԴՎԱԾ Է, ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐԲԱԶԱՏՎԵԼ ՈՐՈՇ ՍՏՐԿԱՄՏՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱԶԳԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԳԻՏԱԿԻՑ, ԱՆՀԱՂՈՐԴ ԵՎ ԽՈՐԹԱՑԱԾ ՎԻՃԱԿԻՑ

3. ՆԵՐԿԱ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑԻ ՄԻՋԻՆ ՕՂԱԿՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՎԻՐՈՒՍԻ ՔԱՅՔԱՅԻՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԲԺՇԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

4. ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՈՒԽՏԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ (ՁՏՎԱԾ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ) ԴԱՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՁԵՏԵՂՎԱԾ

5. ԱՀԱՁԱՆԳ - Բոլոր հայ եկեղեցիներին (նաև մտավորականներին, քաղաքական գործիչներին և այլոց)

# ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

## (ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ)

# ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

## Առաջաբան

Ներկա ժամանակաշրջանում շատերը, ծանոթանալով ՀՅԴ դասական (սկզբնական) պատմությանը, իրապես ոգևորվում են Գևորգ Չաուշներով, Աղբյուր Մերոբներով, Հրայրներով, Նժդեհներով, Արամներով, Ռուբեններով և այլն: Սակայն այսօրվա քաղքենիացած ներ-"ազգային" իրականության մեջ չեն կարողանում գտնել համապատասխան հարթություն՝ ապրելու համար նմանատիպ վեհ ու մեծության կնիքով դրոշմված մի կյանք և աստիճանաբար սառչելով՝ լրացնում են հայ քաղաքականացված քաղքենիների բանակը:

Այո՛, չենք կարողանում, պատմության կրակը բոցավառելով, հայ հեղափոխական անցյալին համապատասխան կազմակերպվել՝ միաժամանակ սրբագրելով անցյալի սխալները: Այս աշխատությունը ներկա հայության տեսադաշտից դեն է նետում հայ հասարակությանը պարուրած ժամանակակից կոսմետիկ երանգները և խորքի մեջ ցույց տալիս անցյալի (մասնավորապես Թուրքահայաստանի) ու ներկայի **օրինաչափությունները՝** սրանով իսկ առաջ քաշելով համապատասխան **պատմամշակութային պլատֆորմ**, որը հիմք կդառնա հայ հեղափոխականների միաբանության (դաշնակցության) **հոգևոր վերածննդի**: Միաժամանակ այն յուրահատուկ կերպով հեղափոխական պայքարը տեղափոխում է **հոգևոր հարթություն**, որի շնորհիվ ներկա հայ մեռյալ ու փսորված իրականության փոխարեն կձևավորվի բովանդակ ազգային օրգանիզմ ու առողջ հասարակություն՝ իր բոլոր դրական ածանցյալներով :

Սույն աշխատությունը նախատեսված է **ԽԻՍՏ ՆԵՂ** ու գործնականորեն տրամադրված շրջանակների համար, որոնք զերծ են բամբասանքի ու այլ հոգևոր ախտերից և պատրաստ են հոգևոր-քաղաքական բժշկին վայել համարձակությամբ իրատեսորեն դիտարկել ներկա հիվանդ հայ հասարակությունը և այն ճշմարտապես ախտորոշելով՝ անցնել բժշկման սուրբ գործին:

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## 1. ԴԱՐԱՎՈՐ ԿԵՂԵՔՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԻՐԱՎԱԶՈՒՐԿ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՏՈՀՄԻԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԻ (նկարագրի, հոգեբանության և մտածելակեպի) ՎՐԱ

Որպես նախաբան՝ հարկ ենք համարում նշել, որ սույն աշխատությունը չի կրում շաբլոն մոտեցում. այն ունի յուրօրինակ, բայց և հստակ ախտորոշող հայացք դեպի հայ իրականությունը (օրինաչափված հայ պատմության հետ), և այս ինքնատիպ վերլուծությունն անաչառ ու լիարժեք գնահատելու համար պահանջվում է տեքստի մանրակրկիտ ու ամբողջական ուսումնասիրություն:

Որևէ կասկած չի հարուցում այն դիտողությունը, որ ժամանակակից հայը շեղվել է ՀԱՅ ՏՈՀՄԻԿ ԱԶԳԱՅԻՆ կերպարից՝ դառնալով գրեթե անճանաչելի (բացառիկ փոքրամասնությանը չհաշված): Սա ցույց է տալիս, որ ՀԱՅ-ի կերպարը հայ զանգվածի մեջ լիարժեք արմատավորված չի եղել, նաև սա փաստում է այն, որ հայության կողմից մինչ օրս խորապես չի արժևորված իր ազգային ԱՐՄԱՏԸ (Հայ Ազգային Գաղափարախոսություն - ԶՏՎԱԾ ՀԱՎԱՏՔ) և այն պահպանող կռվանները՝ հայ եկեղեցական կառույց, հայ պետականություն, հայ համայնքի նահապետական կառուցվածք և այլն: Իսկ վերջիններիս թերի լինելու ԲՈՒՆ պատճառը եղել է (և այսօր էլ առկա է) ԶՏՎԱԾ Հավատքի ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ բացակայությունը հայ Հոգևոր ասպարեզում (նրան տիրապետել է բացառիկ փոքրամասնությունը):

Հստակորեն նկատվում է, որ ինչպես թույլ իմունիտետ ունեցող օրգանիզմում առկա են հատկապես շրջակա հիվանդ օրգանիզմներին բնորոշ վարակիչ վիրուսները, այնպես էլ ներկա հայ Հոգևոր օրգանիզմում բուն դրած “վիրուսները” համապատասխանում են մեր շրջակայքում “տեղավորված” տարբեր խեղված “մշակույթ” ունեցող հարևան ժողովուրդներին հատուկ հոգևոր վիրուսներին:
**Այդ վիրուսներից հատկապես պետք է առանձնացնել հետևյալները.**

**1)** Այսօր հայ զանգվածի առավել մեծ հատվածին, ցավոք, հատուկ է ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ (խոսքը ակադեմիական գիտելիքների մասին չէ), որը չի բխում ճակատագրի ելևէջներից (ինչպես հնում), այլ չկա սերը դեպի կրթությունը, լուսավորը (իր իրական իմաստով, ոչ թե ներկա՝ դիպլոմի պաշտամունքը), իսկ սա գալիս է մյուս՝ հայության համար ամենավտանգավոր վիրուսից՝ ՔԱՂՔԵՆԻՈՒԹՅՈՒՆԻՑ: Այո՛, ներկայումս հայության գերակշիռ հատվածն իր երջանկությունը սնուցում է կենցաղապաշտության ու նյութապաշտության պիղծ արմատից և այս ախտերից էլ բխած նախանձով լի՝ անհանդուրժող է դառնում իրական ՀԱՅ-երի հոգևոր, մշակութային, ստեղծագործական կենսակերպի նկատմամբ: Փոխանակ իրենց ուժերն ուղղեն ներքին հիվանդությունները բժշկելուն, այս “հայերի” մեկ զգալի հատված, իրեն նվաստացած համարելով, ձգտում է ստվեր նետել ՀԱՅ-երի ստեղծագործական բովանդակության վրա (ջանք չխնայելով որևէ կերպ պախարակելու, անարժեք դարձնելու կամ պարզապես ոչնչացնելու այս ամենը):

Նույնիսկ ոչ մասնագիտական աչքով կարելի է նկատել, որ վերոհիշյալ վիրուսները բնորոշ են թուրանական օրգանիզմին, որը մոտ 500 տարի առաջ անկոչ հյուրը եղավ մեր հայ օջախի: Այո՛, վերոհիշյալ նկարագիրը բնորոշում է առավելապես թուրք ԱՄԲՈԽԻՆ (թուրք իշխանավոր խավը մասամբ տարբերվում է թուրք ամբոխից, իհարկե, ոչ արմատապես, այլ որոշակի դրսևորումներով):

**1/ա.** Իսկ գործադիր մարմիններում տեղ գտած մեկ ստվար զանգվածին բնորոշում է թուրք-աղայական վարքագիծը, որին առավել հատկանշական է իշխանամոլությունը, փառամոլությունը՝ փափկակենցաղ հղփացածությամբ շաղախված (նաև անպարկեշտ ցուցամոլությունը և այլն), ու այս ամենն՝ արտահայտված յուրօրինակ ԱՍԻԱԿԱՆԱՑՎԱԾ ցինիկ երանգով: Այս որակները, ինչպես ասացինք, բնորոշ են թուրք իշխանավորին, որոնց ճիրաններում դարերով խեղվել է հայ հոգեբանությունը: Այո՛, թուրքացած հայ իշխանավոր, որը գոչում է՝ “Պետականությո՛ւն…”, բայց պետության լծակներն իր գերանդին դարձրած՝ հնձում է հայ ազգային դաշտի ցանքը (նաև տրորում ու խեղում իր կողմից այդպես էլ չհասկացված Հոգևորը)՝ սեփական ամբարները լցնելու միտումով, շատ դեպքերում նույնիսկ “խոզանը” չթողնելով հասարակ ժողովրդին:

**Այո՛, դարերի ընթացքում հայության մեջ ներարկվել են թուրք հոգեբանության որոշ գծեր, որոնց հատուկ են եղել հոգևոր տկարությունը և ինքնանպատակ ուժի ծարավը, անհանճար հոգին և լպրծուն - “գրավիչ” լեզուն, կեղծավորությունը և ոհմակային կազմակերպվածությունը, բութ միտքն և հաշվենկատ խարդախությունը, ծորուն շողոքորթությունը և նենգ դաժանությունը, քսու ստորաքարշությունը և տափակ, ցինիկ գոռոզամտությունը և այլն : Եթե կարճ ձևակերպումով ասենք՝ էաբանական – խորքայինը վանող և մակերեսայինը, որպես բուն նպատակ արժևորող :**

Վերոնշյալ երկտակված թուրքացած հայ զանգվածին հատկանշական է գռեհիկ թուրքաբարո քաղքենիությունը՝ տիպիկ թուրանական հոգեբանությունը հիշեցնող և սրանից էլ բխած տարատեսակ պիղծ դրսևորումները (նախանձ, փոքրոգիություն, դիրքի մակաբուծություն, պաշտոնապղծություն և այլն):

Եթե փորձենք մեկ “բառով” պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ թուրքը, մեղմ ասած, չի սիրել հային, ապա աներկբայ կարելի է ասել, որ հայը թուրքի համար հանդիսացել է մեկ յուրօրինակ հայելի, որի արտացոլանքի մեջ բացահայտորեն երևացել է նրա հոգեմտավոր մերկ ու զազրելի այլանդակությունը: Եվ որպեսզի նա իր կնոջ (կանանց), իր ընտանիքի, իր շրջապատի (ցեղ և այլն) և, վերջապես, ինքն իր առջև “գեղեցիկ” երևա, մշտապես ձգտել է այս կամ այն կերպ ոչնչացնել հայկականությանը: Այո՛, ինչպես հնում, այնպես էլ այսօր, որպեսզի բնածին (կամ ձեռք բերովի) այլանդակը երևա գեղեցկադեմ, իր խեղված էությունից մղված՝ մեկ հեշտ ու կարճ ճանապարհ է տեսնում, այն է՝ ջարդուփշուր անել “անիծյալ հայելին”: Իսկ ջարդուփշուր անելու թուրքաբարո հանրահայտ տարբերակներից մեկը հային հոգեբանորեն իր նման մեկը դարձնելն է՝ միայն թե մշտապես ձգտելով իշխող ու ազդեցիկ նյութական-ուժային բազան իր ձեռքում հավաքած պահել (նյութական ասպարեզում հային մրցունակ լինելուց զուրկ պահելու միտումով): Սա նույնն է, թե մահացու հիվանդը իր բուժման գրավականը տեսնի ախտորոշող

սարքը կոտրելու մեջ (թե որքան է “կշռում” թուրք ուղեղը, թեկուզ զուտ պարզ տրամաբանական հարթության վրա, թողնում ենք խորհելու իրենց)։ Այս հոգեբանությունն է, որ հայկականությունը նողկանքով կոչել է ԹՈՒՐՔ։

Այո՛, ի տարբերություն մարմնավոր ասպարեզի (որտեղ ի հաշիվ հայկականի՝ թուրքը ձգտել է ազնվացնել-գեղեցկացնել յուր ցեղը՝ հայ աղջիկների ու մանչուկների առևանգումների գնով)՝ հոգևոր ասպարեզում թուրքը մշտատև ձգտել է իրենից որակապես բարձր ու գեղեցիկ “սանդղակի” անվերապահ ոչնչացմանը։ Բուն պատճառը մեկն է՝ թուրք հոգեբանության մեջ, որպես կեդրոն մարմնավոր (անասնական) երջանկությունն է արժևորված, իսկ այս շրջանակում հոգևորի պակասության առկայության թեկուզ ակամա լուսաբանումը զուտ վիրավորականի հնչեղություն ունի նման ցանցառ ու ծանծաղ արժեհամակարգում։

Սա է ԲՈՒՆ պատճառը, որ թուրք-հայ առճակատումը նման չի եղել այլ ազգերի մեջ ժամանակ առ ժամանակ կրկնվող բախումներին։

Թերևս շատերը համաձայնեն թե վերոնշյալ, թե ներքոնշյալ ախտորոշումներին, բայց և միաժամանակ կողմնակից չլինեն այս ամենը քննարկելուն: Սակայն այս երևույթների նկատմամբ երկարատև լռությունը նշանակում է համաձայն լինել, որ՝ ա/ սույն թարախակալված վերքը վերաճի ՓՏԱԽՏԻ, բ/ լիովին արժեզրկվի ու հայհոյանքի նյութ դառնա ՀԱՅ հասկացությունը (սրանից բխող պիղծ ու քայքայիչ հետևանքներով) :

**2)** Հայության մեկ այլ մեծաքանակ զանգվածին առավել հատուկ է կռվազանությունը (“ռազմատենչություն”), որի “հոգևոր” արժեքային համակարգն ունի մեկ ձևավորված արմատ. եթե հրմշտողը, խփողը, խայթողը, տրորողն ինքն է, ապա “հաղթանակն” իրենն է (չընկալելով այս հոգեբանության ասիականացված, կենդանական բնազդով լի բթամտությունը, բռիությունն ու ճիվաղությունը), իսկ եթե հանկարծ ինքը ներողամտություն պիտի հայցի դիմացինից (որին անտեղի վիրավորել կամ վնասել է), ապա դա այս պարզունակ ու խավար արժեքային համակարգում համարվում է պարտություն: Այս կռվազան կամ “իգիթ” խավը (առավել նկատելի է արական սեռի մոտ) մեծամասամբ հանդես է գալիս խմբակային կառուցվածքներով՝ թաղային հեղինակությունների կամ կլանային (նաև՝ պետական) օլիգարխների շուրջ համախմբված (առկա է նաև սրանց միահյուսված տարբերակը)։ Այս զանգվածին ևս հատուկ է արծաթասիրությունը, բայց՝ արկածախնդրության հետ շաղախված, սրանց հատուկ է “քաջությունը”, բայց՝ անբովանդակ, զուրկ Հոգևոր մղումից, սրանց հատուկ է սերը դեպի ուժը (առավելապես՝ ֆիզիկական, զինական, ուժային կառույց), բայց՝ ոչ նժդեհյան ուժի իմաստաբանությամբ, սրանց հատուկ է հավատարմությունը դեպի խմբակային շահը, բայց՝ ոչ Գաղափարի-Հոգևորի (նաև՝ պետականության) շուրջ համախմբված, սրանց խմբակցությունը ամեն անհատի շահը (ԵՍԸ) սնուցելու լավագույն միջոց է (ինչպես շնագայլերի մոտ ՈՀՄԱԿՆ է արժևորված), սրանք լինում են ռազմիկ, բայց՝ ոչ ՖԵԴԱՅԻ, սրանք լինում են քաջ՝ “պատերի անկյուններում”, բայց՝ ոչ խրամատներում, իսկ եթե դեպքերի բերումով հայտնվում

են նաև ազգային թեժ բնագծերում, ապա դա լոկ բախտախնդրության ու արկածախնդրության ԾԱԼՎԱԾ էջերից մեկն է մնում նրանց կենսագրությունում… Նույնիսկ առանց հայ պատմության խորխորատի էջերը թերթելու՝ կարելի է նկատել, որ այս երկրորդ վիրուսը բնորոշում է դարերով հայ ժողովրդին "շրջապատած" քրդական* աշիրեթներին, որոնց գլխավորում էին աշիրեթապետերը (թոռուն) : Այստեղ նպատակահարմար ենք գտնում մեջբերում անել հայ հեղափոխական դեմքերից մեկի գրառումներից (որը, կարելի է ասել, իր մաշկի վրա է զգացել, թե ինչ է քրդական աշիրեթը), և տող առ տող "զարմանալիորեն" նկատելի է դառնում օրինաչափությունը աշիրեթի և այս հայ (2-րդ) զանգվածի միջև. "… վաչկատուն քրդերը, կամ, ինչպես իրենք են ասում, աշիրէթները: Նրանք ըմբոստ են, ավազակաբարոյ և դաժան… Վաչկատուն քրդերը **ատում են գուրանի քրդերին (նստակյաց քրդեր, հեղ.), ստրուկ են համարում նրանց և ամեն պատեհ առիթով նեղում են ու հալածում այս վերջիններին** … Քրդական աշիրէթի համար կեանքի ամբողջ հաճույքը իր ձին է, զենքը, խաղն… Գոմեշի նման վրիժառու ու գայլի նման գիշատիչ, նա շարունակ խաղեր է խաղում կեանքի հետ, առանց երբևէ մահից սարսափ զգալու… կրօնով, ճիշտ է, մահմեդական է, բայց փաստօրեն նա կրօն չունի… Նա չունի ո՛չ պարսիկի, ո՛չ… կրօնական մոլեռանդութիւնը: Նրա իսկական կրօնը-ՈՒԺՆ է, և իր իսկական տարերքը-իշխելու տենչը: Նա սիրում է ակնածանքով խոնարհուել հզօրների առջև և էլ ավելի դաժանորեն իշխել թոյլերի վրայ: Նրա համար ստոր կարգի մարդիկ են բոլոր ռայաները (աղքատ՝ ստորին խավ, հեղ.) ինչ ազգից էլ որ լինեն… Ահա թե ինչու թափառական քիւրդը, որը կուլտուրապես շատ ավելի ցածր է իրեն շրջապատող մի շարք ազգերից, ԻՇԽՈՒՄ Է ՆՐԱՆՑ ՎՐԱՅ, ԵՐԲ ՆՐԱՆՔ ԹՈՅԼ ԵՆ… Աշիրէթի հեղինակութիւնն իր մարդկանց թիւի ու քաջութեան և իր ղեկավար թոռընի ընդունակութեան և հերոսութեան մէջ է… Թոռընը ազնվական է աշիրէթի աչքում, նա նույնիսկ ԿՈՒՌՔ է նրա համար, որին բոլորը պիտի ենթարկվեն: Նա հայրն է իւր ցեղի… իսկ եթե դժբախտութեան զոհ դառնայ թոռընը՝ աշիրեթն ալ իւր ամբողջութեամբ պիտի քայքայուի ու ցրվի: Այդ է պատճառը, որ կռուի ամենէն հաջող վայրկեանին, եթէ թոռընը զարկուի, աշիրէթն անպայման տանուլ կը տայ իր վաստակած յաղթանակը: Թոռընը տէրն է իւր աշիրէթի… նա կարող է վերջին ոճրագործին պատիւներով պսակել ու վերջին անմեղին հրացանի բռնել … Աշիրէթն անշահախնդիր ձևով չէ անշուշտ, որ այսքան զոհողութիւններ է ստանձնում իր ղեկավարի հանդեպ…" (Ռուբեն, "Յուսաբեր", 1925 թվ., 7, 10, 12, 14, 18, մարտ): Այսօր, երբ փորձում ենք պատմության վերլուծմամբ ցույց տալ այն

---

* ***Հստակության համար նշենք, որ քուրդ աշիրեթ կառույցը նկարագրելով՝ այն զատում ենք քուրդ ժողովրդի նկարագրից ու մշակույթից (քրդական աշիրեթները ոչ պակաս կեղեքել են նաև քուրդ աշխատավոր ժողովրդին) :***

բանալին, որով կարելի է բացել հայ բանտարկված իրականության ժանգոտած կողպեքը, շատ "քաղաքագետ" հայեր դեռ կես խոսքից հակաճառում են, թե "… դա հնում էր, իսկ այսօր "կյանքը" փոխվել է, այսօր իրականությունն այլ է…": Սակայն ի՞նչն է փոխվել, ա՞յն, որ հնում քուրդ թոռունի մեկ արաբական նժույգն արժեր 50-70 հատ "սովորական" ձի (շատ հայեր նույնիսկ այս "սովորականի" մեկն էլ չունեին), իսկ այսօր քրդացած հայ թոռունների (կամ աշիրեթների) մեկ ՋԻՊԸ արժե 50-70 սովորական ավտոմեքենա…

---

***Ծանոթ.- Հստակության համար պետք է նշենք, որ խոսքն այն մասին չէ, թե ջիպ (կամ հարստություն) ունեցողը քրդացած հայ է: Իհարկե, ո՛չ, ինչպես հնում ամեն մի արաբական նժույգ ունեցող քուրդ աշիրեթի ներկայացուցիչ չէր : Այլ է քուրդ աշիրեթն ու ներկայումս նրա "հայկական" օրինաչափությունը, այլ է ՀԱՅ-ը (տե՛ս ՀԱՅ Տոհմիկ Ազգային կերպար, Նժդեհ "Հատընտիր", էջ 251-258):***

---

Հնում ամեն մի քուրդ թոռուն ուներ ամենաքիչը 500-700 ղոլամներ (մեծամասամբ ցեղակից քրդեր), որոնց հիմնական գործը թոռունի պահպանումն ու հայ պարզ շինականների կեղեքումն էր (նաև՝ քուրդ գյուղացիների), իսկ այսօր սրանք՝ քրդացած հայ թոռունների ղոլամները,որ կոչվում են "սափրած գլուխներ" և այլն, պակաս չեն կեղեքում հայության ներուժը: Հնում հայ համայնք ներխուժելիս քուրդ թոռունի արաբական նժույգի, արդուզարդի ոսկեզօծ ՓԱՅԼՆ ու զինավառ հեծելազորի պճնազարդ ու սարսափ տարածող գայթակղիչ ազդը Հոգևոր ողնաշարը կոտրված հայ գյուղացիներից շատերի ակնածանքն ու ստրկամիտ հարգանքն էր շարժում՝ միաժամանակ ամեն քայլափոխին տրորելով հայի պատիվը, ազգային զգացմունքն ու Հոգևոր ակունքները, իսկ այսօր իրենց "արաբական" ՋԻՊԵՐԸ "հեծած" քրդացած հայ աշիրեթների "հեծելազորը" նույն հայ հասարակ խավի (միայն թե էությամբ էլ ավելի խեղված) ակնածանքը, ստրկամիտ հարգանքն ու նախանձն է շարժում՝ միաժամանակ իր պատմական օրինաչափությունից (քուրդ աշիրեթից) բոլորովին ետ չմնալով, տրորելով ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ արմատի վերջին մնացուկները…

Սակայն մի պահ կանգ առնենք. միգուցե սխալվո՞ւմ ենք, միգուցե իսկապե՞ս շատ բան է փոխվել ներկա՝ "քաղաքակիրթ" հայոց աշխարհում… Իհա՛րկե այո, ՓՈԽՎԵԼ է. հնում հայ աղջիկը ինչ-որ ձևով ձգտում էր իրեն տգեղ ցույց տալ կամ նույնիսկ քարափից ցած էր նետվում, միայն թե չմտներ քրդական հարեմը (նույնիսկ առաջին տիկնոջ կարգավիճակով): Իսկ այսօր շատ հայ աղջիկներ (եթե չասենք՝ գերակշիռ մասը) ժամանակակից կոսմետիկ հայտնի ու "անհայտ" միջոցներ են բանեցնում, որ հայտնվեն այս հարեմում՝ թեկուզ որպես ամենավերջին մի հարճ… Այո՛, ՓՈԽՎԵԼ է. եթե հնում Սասուն, Մուշ և այլն գավառներում հայերն իրենց հատուկ նահապետական համայնքային կառուցվածքով ու Հայ Առաքելական Եկեղեցու շուրջ բոլորած քիչ թե շատ պայքարում էին քրդական խեղումների դեմ՝ ձգտելով ավանդապահ ու անաղարտ պահել հայ բնօրրանը, ապա այսօր շատ հայեր, որպեսզի դուր գան քրդացած հայ թոռունին կամ նրա "ղոլամներին", պատրաստ են իրար ու առավել ևս հայ ՍՐԲՈՒԹՅԱՆ արժեքները տրորել, միայն թե ինչ-որ մասը ստանա դեռ հեռվում երևացող այն ՄԵԾ ԲԱԺՆԻՑ, որը դարձել է ներկա հայության "գաղափարաբանության" միջնաբերդը՝ ԲԱՐԵԿԵՑԻԿ կյանք անվանումով: Ինչպես տեսնում եք, սխալվում էինք. իհարկե ՓՈԽՎԵԼ է, բայց… Ներկայումս հայ մշակույթն ու պատմությունը չյուրացրած հայեր կան, որոնց աչքերում քրդացած հայ աշիրեթները քաջարի՝ "իգիթ տղերք" են, իբր հայության ճակատը "բարձր" պահողներ (չնայած նրանց շահատակություններին): Սակայն ՀԱՅ հոգեբանությունից պատկերացում չունեցող այս հայերին պատմությունը "մեղմ" հուշում է՝ ՀԱՅ-ին քաջության, հերոսության դասեր տալու կարիք չկա (այն էլ անբովանդակ քուրդ - աշիրեթականը), ՀԱՅՆ իր քաջությունը՝ իմաստության լիցքով, "ակամա" ապացուցել է դեռ ՀԱՅԿՅԱՆՆԵՐԻ ապստամբությամբ՝ աշխարհակալ Բելի առջև չծնրադրելով, ՎԱՐԴԱՆՆԵՐԻ կողմից տարածաշրջանի

ահը դարձած մատյան գնդերի խոյահարմամբ, լոկ 20 քաջերով Գևորգ Մարզպետունիների կողմից հագարացիների կուռ բանակին խուճապի մատնելով (և ի լուր բոլորին ազդարարելով, որ թեկուզ “ՄԵԿ” ԾԱՂԿՈՎ՝ հայի գարունը պիտի բացվի)… մինչև… Օտոման բանկի դուռն իր խոցված մարմնով բացող Բաբկեն Սյունիները… մինչև իրենց անաղարտության ու համարձակության շնչով նույնիսկ թշնամու ակնածանքը շարժած Գևորգ Չաուշներն ու Գալենները, որոնք մի քանի ֆիդայիներով մտնում էին 700-ից մինչև մի քանի հազար և ավելի զինյալ ղոլամներով շրջապատված քուրդ թոռունի մեյդանը (որջը)՝ պահանջելով դեռ “երեկվա” թալանված հայ գյուղացու ունեցվածքը ետ տալ… մինչև… փականազերծված նռնակը բռունցքում կամավոր պատանդ հանձնվող Թաթուլ Կրպեյանները…

**3)** Հայության մեկ այլ զանգված (ավելի փոքրաքանակ, քան առաջինը կամ երկրորդը), որը կարծես թե քաղաքակրթված է հանդես գալիս, վերցրել է ոչ թե քաղաքակրթության հոգևոր ակունքներից բխած արժեքները, այլ զուտ նրա արտաքին փայլը, ժեստերը, լոզունգները, սնամեջ գաղափարները և այլն: Սրանք “եվրոպականացված” “բարձրաշխարհիկ” հայերն են, որոնք դեռ խորապես չեն տարբերում, որ առկա է ԵՐԿՈՒ Եվրոպա՝
ա) Եվրոպա, որը Հոգևոր մշակույթը (թեկուզ խղճմտանքի զգացողությամբ) յուրացրել ու այն արտահայտում է արվեստի, գրականության, քաղաքացիական հասարակության, անհատական վարքագծում (և այլն) և տոգորված է ներդաշնակ աշխարհ կառուցելու գործընթացով,
բ) Եվրոպա, որը լի է իրար հակասող ու սնամեջ գաղափարներով, իբր մարդասիրական, խաղաղ աշխարհ կառուցելու ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ լոզունգներով (զուրկ՝ ԶՏՎԱԾ Հոգևոր մշակույթից) և սրանցից բխած՝ մարդկային իրականության ճահիճը դարձած զանազան ՇՈՈՒ-ներով: Թերևս այս Եվրոպան է նկատի ունեցել Լայբնիցը՝ կարևորելով դաստիարակության խնդիրը . “Տվեք ինձ դաստիարակությունը, և ես կփոխեմ եվրոպացու դեմքը”: Իզուր չէ Խրիմյան Հայրիկը նկատել, որ մենք Եվրոպայից առավել հաճախ վերցնում ենք միայն նրա քափը:

Իհարկե, այս ասպարեզում են նաև “ծանրաբարո” եվրոպամետ հայերը, որոնք “դեմ” են թեթևամիտ ՇՈՈՒ-ներին, բայց միաժամանակ տարածում են վերոհիշյալ պիղծ գաղափարները (արմատը), որոնց սնամեջ լինելու պատճառով է, որ ծնվում է նման ՇՈՈՒ-ների սիրահար, նյութամոլ, դատարկապորտ ու գաղափարականությունն արհամարող խավը (առավելապես՝ երիտասարդություն): Այս “ծանրաբարո” կամ թեթևաբարո եվրոպամետ հայերի թե բուն էության, թե նրանց ճամարտակած սին գաղափարների մեջ է, որ թաքնված է մեղքը՝ նյութապաշտությունն ու անձնակենտրոն հոգեբանությունը, միայն թե շղարշված՝ ԾԱԾԿՎԱԾ փուչ բարոյագիտական ու կույր (աղանդավոր) կրոնամոլության դարձվածքներով. “Եւ Տէր Աստուած պատուիրեց մարդուն՝ ըսելով. “… Բայց բարիի ու չարի գիտութեան ծառէն մի՛ ուտեր… ու մերկ ըլլալնին գիտցան եւ թզենիի տերեւներ կարեցին ու իրենց ծածկոցներ ըրին” (Ծնն. 2.16, 3.7): Սրանց մոտ նույն քաղքենիական հոգեբանությունն է, ինչ որ առկա է թուրքացած հայերի մոտ, միայն ոչ թե գռեհիկ, այլ “բարձրաշխարհիկ” երանգով արտահայտված, այսինքն՝ բուն էության մեջ նույն թուրքաբարո հոգեբանությունն է, միայն թե իբր “եվրոպականացված” (շղարշված բարոյագիտական ու սնամեջ գաղափարական

լոզունգաբանությամբ և այլն ): Ներկայումս Հայաստանում իշխանության մեջ գնալով ավելի մեծ տեղ է գրավում այս “եվրոպականացված” խավը՝ վանելով թուրքացած հայ իշխանավորներին:

……..

*Ծանոթ. – Ի վերջո պետք է Արևմուտքն (նաև իրենք՝ եվրո-հայերը) ընկալի, որ Հոգևոր-ազգային արժեքներից շեղված այս “հայերը” չեն կարող կառուցել ներդաշնակ աշխարհ (գլոբալիզացիա կամ այլ անվանում կրող), սրանք միայն կամա թե ակամա ավերողներ են (այս հիրավի էական հարցում), քանզի իրենց հոգում չեն կրում Հոգևոր բովանդակություն: Համամարդկային արժեքներ հետապնդող Արևմուտքը պետք է ընկալի, որ իրենց ոստանի (հիմնարկ, օֆիս, խանութ և այլն) ցուցափեղկի վրա՝ ամենավերևում մեծատառ անգլերենով, իսկ ներքևում՝ փոքրատառ հայերենով գրառող “հայերը” չեն, որ արևմտյան իդեալներն իրականություն պիտի դարձնեն: Երբ պիտի հասկանանք, որ Հոգևոր-ազգային արժեքներ արհամարհողներն իրականում նույն վերաբերմունքն ունեն նաև համամարդկային արժեքների հանդեպ:*

……..

**Ոչ վաղ անցյալի, բայց և հատուկ (չմոռացված) դրոշմով հայ պատմությունը, ցուցանելով այս սնամեջ “քաղաքակրթված” ու իբր եվրոպականացված “հայ” տարրը, մեզ ահազանգով հիշեցնում է ԵՐԻՏթուրք կոչված հոսանքի մասին, որի թողած հետքերն անջնջելի մնացին հայ մարմնի ու հոգու վրա: Այո՛, երիտթուրքեր (“Ժեօն” թուրքեր), որոնք, 1908 թ. տապալելով թուրքական մոլի ավատատիրական իշխանությունը, իբր թե սկիզբ դրեցին նոր կյանքի՝ “Եաշասն հուրիեթ, ատալեթ, մուսավաթ” (կեցցե՛ ազատությունը, արդարությունը, հավասարությունը) սնամեջ լոզունգներով, իսկ սրա հետևանքը, ինչպես հայտնի է, եղավ ՀԱՅ օրգանիզմի խեղումը:**

……..

*Ծանոթ. - Այո՛, ինչպես հնում, այնպես էլ ներկայումս երիտթրքացած հոսանքի՝ Հոգևորից զուրկ “լուսավոր” լոզունգները զուտ գրգռեցին ու էլ առավել մոլորեցրին ամբոխին՝ միաժամանակ պիղծ ու մութ իրականության բուն էության մեջ ոչինչ չփոխելով: Վերջինս պատճառ դարձավ լուսավոր շատ գաղափարների արժեզրկմանը. “… Յաճախ դիտած եմ. երբ գարնանը դուրս կը հանեն բուղան մութ ախոռէն, խեղճ կենդանին բան չի հասկնար աշխարհէն, արեւը նոյնիսկ խավար կը թուի: Բան մը, … փոխված կը զգայ աշխարհին մէջ, կուզէ հասկնալ, բայց չի հասկնար. կը զարմանայ. գլուխը կը տնկէ վերեւ. եղջիւրները… եւ ահա առաջը ինկած խուշկու (չոր թրիք) դեզէն կառնէ վրէժը… Այս պատկերը շատ կը հարմարէր, Օսմանեան Սահմանադրութեան առաջին օրերուն… ամէնքը կը զգային, որ… գարուն է եկած: **Բայց ի՞նչ է այդ գարունը**… Այս կարճ ժամանակուան ընթացքին շատ բան էր փոխուած. **այլևս առաջուան նման հարբած չէր երեւար ամբոխը**, ՄԻԹԻՆԿՆԵՐ քիչ կը սարքուէին… “Ջանըմ, **օսմանցու խաբեբայութիւն** է այս սահմանադրությունը… Օհան ճիշտ կասէ. Սա սահմանադրություն չէ, այլ օյինպազութիւն… “… հակազդեցութիւնը սկսած էր հայերու մէջ, բոլորն ալ դժգոհ կերեւան եղածէն…”*(Ռուբեն, “Հայ յեղափոխականի մը յիշատակները”, հ 5, էջ 9-28 : Բոլոր մեջբերումների ընդգծումները – հեղ.) *:*

……..

Իհարկե, ինչպես հնում, այնպես էլ այսօր ԵՐԻՏթրքացած հոսանքը զուտ լոզունգներով “գնահատում” է հայ ֆիդայությանն ու հայ հայրենասերներին, բայց խորքի մեջ քուրդ աշիրեթական խեղող ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆ է հայության

պարանոցին փաթաթում. “… Ամբոխը, խուժանավարի մը ետեւէն ինկած, տեսայ, հարայ-հռոցով եկաւ շրջապատեց Առաջնորդարանը: “Եաշասըն ֆետայլար, եաշասըն էրմէնի վաթանփէրվէրլար (**կեցցե ֆետայիները**, կեցցե հայ հայրենասերները, հեղ.) “ աղաղակներով կոչ կընեն ինծի… Թուրք սպաներ եւ առաջնորդներ ներս կը խուժեն. իմ “չեմ ու չում”-ին կը միջամտէ Վարդան Վարդապետը… Մեծ հոյսեր ունէինք Վեհիպի վրայ. ահա վերջապէս եկաւ սահմանադրութեան իսկական բերողներէն մէկը. ան պիտի զանազանէ այծը ոչխարէն, սեւը մէկ կողմ դնէ, սպիտակը միւս կողմ, վերջապէս պիտի ազատէ “Ժէօն-թուրքութիւնը” ծեր թուրքութենէն… բայց… **չոչնչացուց ՔՈՒՐԴ Համիտիէները**, այլ **ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ** պետերը կանչեց իրեն մոտ եւ յանձնարարեց ցեղերու մէջ կազմել “Ժեօն թուրք” կոմիտեներ: Մեզի հետ շատ սիրալիր էր… կըսէր թէ. “շատ երիտասարդ է թուրք-քիւրդ ժողովուրդը, պետք է զգուշութեամբ մօտենալ եւ տակտով կազմակերպել, որ չիյնան հակայեղափոխութեան գիրկը. Այժմ պետք է շոյել, մինչեւ անոնց մէջ եւս…” … Վեհիպ վարպետ էր… Իմ գրպանս չամիչ կը լեցներ խաբելու համար, բայց ես այնքան խաբուած էի, որ կասկածամիտ էի դարձած…” (Ռուբեն*, նույն հատոր, էջ 12, 74-75):

**Այո՛, պատմությունը շատ առումներով ցավալիորեն կրկնվում է՝ նրանից այդպես էլ համառորեն դաս չքաղած հայության համար:**

*Ծանոթ.- Այսօր թուրք-աղայական վարքագծով հայ պաշտոնյաներ կան, որոնց կենսակերպին ծանոթանալիս կնկատենք հայության ներուժի (պետական կամ ազգային խոհանոցի) աննախադեպ փոշիացում ու անհագ յուրացում, որը ուղեկցվում է հայազգի շարքային ծառայողների (առավել՝ երիտասարդության) ստորացուցիչ, շատ դեպքերում՝ անվայել, անբարո ու անարժան ծառայությունների մղելով: Այս թուրքաբարո “հայ” պաշտոնյաների հավաքական կերպարը հայ տաղանդավոր գրող Ռաֆֆին կոչել է հանրահայտ “Թովմաս Էֆենդի” անունով, որին նա դիմում է հետևյալ կերպ. “**Լի՛ր, սովորել եք ԹՈՒՐՔԵՐԻ նման ամեն հայի տուն մտնել, նրա սեղանը լափել, նրա գինին լակել և նրա հարսին, աղջկան, ջահել տղային անարժան ծառայություններ անել տալ: Լի՛ՐԲ**…” (տե՛ս “Խենթը, Ռաֆֆի, Երևան, 1978, էջ 98):*

*Ներկայումս հայ իրականության մեջ վխտում են “մեծատաղանդ” քաղաքական, “մտավորական”, “մշակութային” գործիչներ, որոնք փորձում են հայ պարզ քաղաքացիների առջև իրենց որպես ՀԱՅ ու “բարեգործ” ծախել և ազգայնական-մշակութային դաշտում երևելիի համարում ստանալ: Իհարկե, սրանք փանջունիաբար “քննադատում” են առկա ազգաքանդ գործընթացը և “անողոքաբար” հայհոյում այն կատարողներին (թուրքացած վերին խավին), սակայն եթե փորձենք ծանոթանալ նրանց ներքին (“2-րդ”) “կյանքին”, ապա կտեսնենք, թե նրանք ինչպես են գետնատարած նամազ անում հենց այն՝ նույն թուրքացած “մեծ” կերպարների ու նրանց պաշտած “հոգևոր” արժեքների առաջ և գռեհիկ քմծիծաղով ու արհամարհանքով խոսում ՀԱՅ-ի տեսակի, նրան հատուկ նկարագրի ու այն կրողների մասին (իրենց հատուկ թուրքավարի ոճով “հարիֆություն” անվանելով հայկական բնույթի ազնիվ գծերը): Այս ամենից հետո, եթե փորձենք նրանցից բացատրություն պահանջել իրենց “հայեցի” խոսքի ու լիովին հակադիր թուրքաբարո հոգեբանության առումով, ապա պարզ է, որ զրպարտության մեջ ենք մեղադրվելու.”…Բայց Էֆենդին … հասկացավ, որ նրա հետ չէր կարելի վարվել, **որպես վարվում են Ալաշկերտի հայ գյուղացու հետ** … մեղմ ձայնով ասաց. - Աստված էլ գիտե, որ ես թուրքերի սովորություններին չեմ հետևում: Դու իզուր զրպարտում ես ինձ, **Վարդան**”:*

*Ասենք, որ սույն հիվանդությունը հին է, միայն թե չարորակ ուռուցքի պես առավել ծավալված ու խորացած: Ահա թե ինչ է պատասխանում Ռաֆֆին՝ հայրենաշունչ մեծ հեղափոխականը, հայ իրականության մեջ խլրտացող այս կերպարներին. “ - Ե՞ս եմ զրպարտում … քե՞զ, որ ԹՈՒՐՔԵՐԻ մոտ ՆԱՄԱՋ ես անում, իսկ հայոց եկեղեցու սեղանի վրա պատարագ ես մատուցել տալիս ռամիկների ՀԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ գրավելու համար…քե՞զ, որ թուրքերի մոտ ասում ես, թե բոլոր հայերը “գավուրներ” են, իսկ հայերի մոտ հայհոյում ես նրանց…քե՞զ, որ թուրքերի կառավարության առջև ՄԱՏՆՈՒՄ ԵՍ ամեն մի ազնիվ և իր ազգի շահերը մտածող հային…քե՞զ, որ ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԸՆԿԵՐԱՆՈՒՄ ԵՍ և դատարանների առջև սուտ վկայություն ես տալիս, թե հայերը անիրավացի են բողոքում նրանց հարստահարությունների մասին … Դո՞ւ չես հետևում թուրքերի սովորությանը … Բայց ես կասեմ, որ թուրքը, հազարապատիկ ազնիվ մարդ է, ՔԱՆ ՔԵԶ ՆՄԱՆ հայը, որովհետև դու ոչ հայ ես և ոչ թուրք…” (նույնը՝ էջ 98-99): Ներկայումս այս նորօրյա էֆենդիներին կուզենայինք նկատել տալ Թովմաս Էֆենդու կողմից, որը վարժվել էր մոլորված ու միամիտ հայ ռամիկ ժողովրդին գռեհկաբար համեմատել ավանակի հետ, իր իսկ հիմարությունը ընդունած վերջին խոսքերը. “Սոված էշը գարու հոտ առավ, մինչև գարին բերելը հոգին տվավ”… Այդ եղավ էֆենդու ՎԵՐՋԻՆ խոսքը…” (նույնը՝էջ 259): Պետք է ասենք, որ նույնիսկ այս վերջաբանը շատերի համար երանելի կլինի, քանզի Աստծո առջև իրապես մեղա գալը անասնական շահագրգռվածության ու ինչ-որ “ջհանդամի” (ոմն դժոխքի) հանդեպ եսակենտրոն վախի ծնունդ չէ, այլ այն միայն Բացարձակ-Զատող Սիրուց (Աստծուց) է ծնվում: Իսկ այս ՍՈՒՐԲ արժեքը վերջին պահին որտեղից պետք է գտնեք՝ձեր սմքած հոգու կնճիռների միջի՞ց: Հարկ ենք համարում նշել, որ հայը, վերոնշյալ վիրուսներով վարակված լինելով , նույնիսկ զուրկ է թուրք - աշիրեթների կենսունակ հատկություններից. վերջիններս, չնայած իրենց խեղված մշակույթին, գոնե ունեն ձիրքեր՝ քաջաբար պայքարելու հայրենի տարածքների ու շատ այլ ընդհանրական գաղափարների համար, ինչը հատուկ չէ թուրքացած կամ քրդացած հայերին : Հայը, վարակվելով թուրք- աշիրեթ (և այլն) վիրուսներով, ոչ թե լիարժեք նմանվում է նրանց, այլ դառնում է վերջիններիս լոկ լղոզված, հեղհեղուկ նմանակը :*

---

**Ռուբենի մասին տարածված են տարբեր ասեկոսներ և քննադատություններ, որոնց քննությունն ու ճշգրտումները առավել ևս ներկայումս բավականին բարդ են: Արդի քաղաքական որոշ ուժեր Ռուբենի դեմ եղած քննադատությունները պարզապես բանեցնում են զուտ բամբասանքի ու շաղակրատանքի մղումներով: Պետք է նշենք, որ Ռուբեն գործչի (առավել՝ անձի) միգուցե և հնարավոր թերությունները, որոնք ակնարկված են որոշ գործիչների կողմից, եթե անգամ իրականությանը համապատասխանել են , ապա դրանք հետագայում նկատելիորեն սրբագրվել են նրա հոգում : Սրա լավագույն վկայությունն է՝ նրա՝ յոթ հատորից բաղկացած “հիշատակները”, որտեղ ոչ միայն տողերից, այլ նաև տողերի “արանքից” (որն առավել էական է) զգացվում է իրապես հայկական շունչը :*

*Համենայնդեպս մեծ է Ռուբենի նվիրումը, դերն ու ազդեցիկ կերպարը հայ հեղափոխության մեջ (վկա՝ թե տվյալ ժամանակաշրջանի այլ ազդեցիկ հայ հեղափոխական, ռազմաքաղաքական և այլն գործիչների վկայությունները, թե այն, որ Ռուբենին անվերապահ նվիրված էին մնում Տարոնի ֆեդայիները՝ չնայած վերոնշյալ մեղադրանքներին) :*

*Բոլորովին էլ չուզենալով հոկել Ռուբենի հնարավոր թերությունները, միաժամանակ կուզենայինք, որ ներկայումս սույն գործչին “հերոսաբար քննադատողները” մատնացույց անեն արդի հայ իրականության մեջ “աննկուն գործող” ու մեծադղորդ զրոներով հպարտացող շարվեշարան մեկ ու կես հոգիանոց կազմակերպությունների մեջ գոնե 0,5 Ռուբեն : Նման կենսագրություն ունեցող գործիչներին կարող են քննադատել նրանց հետ ճակատագիրը հավասարապես կիսած անձինք : Ասել է թե ամեն բան կառուցողական է, երբ այն հոգևոր մղումներով, տեղին ու ճիշտ իմաստի մեջ է արտահայտվում (այլ է քննադատությունը, այլ է տեղի - անտեղի բամբասանքը) :*

*Առավել կարևորն այն է, որ մենք **ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ** չպետք է խարսխենք կոնկրետ մեկ կամ մի քանի անձերի վրա (եթե այսպես շարունակվի բոլորի վրա էլ, եթե ոչ այսօր, ապա վաղը "կեղտի" բծեր է հայտնաբերելու մեր "սրբազան" միջավայրը՝ ներկա հայությանն իսպառ զրկելով այնքան անհրաժեշտ ոգեկոչող հերոսական կերպարներից) : Սա է պատճառը, որ Ռուբեն անունը գրառելիս առավել օգտագործում ենք հոգնակի ձևը՝ ռուբեններ, քանզի համենայնդեպս այն՝ ինքնաբուխ հայեցի շնչող կերպարը, որ շատ դեպքերում անուղղակիորեն ձևավորվում է նրա "հիշատակներից", եթե ոչ ինքը, ապա նմանները հայ հեղափոխության մեջ բյուրավոր են եղել :*

## 2. ԵԹԵ ԱԶԴՎԱԾ Է, ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐԲԱԶԱՏՎԵԼ ՈՐՈՇ ՍՏՐԿԱՄՏՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱԶԳԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԳԻՏԱԿԻՑ, ԱՆՀԱՂՈՐԴ ԵՎ ԽՈՐԹԱՑԱԾ ՎԻՃԱԿԻՑ

"**Վերածնունդ չկա** եւ ոչ մէկ տեղ, ուր կը բացակայի իմացական տառապանք եւ զգացումի խռովք՝ **անցեալը կենդանիօրէն հոգեգծելու եւ դարձնելու ներկայի առաջնորդ**": (Հ. Ասատրյան, "Հատընտիր", էջ 86):

Վերոնշյալ **ԵՐԵՔ** տարրերն էլ (թուրքացած, քրդացած ու երիտթրքացած հայերը) կազմում էին Արևմտյան Հայաստանի ոչ բնիկ մասի վարակված կրկնօրինակը: Այս ոչ բնիկ հատվածի, մեղմ ասած՝ ոչ արգասաբեր հոգեբանության ու գործունեության հետևանքով էր, որ դեռ 20-րդ դարի սկզբին հայերից դատարկվեց մեր բնօրրանը (**ԵՐԿԻՐԸ**) :

## Հարց է ծագում՝ որտե՞ղ ենք մենք. Հայաստանո՞ւմ, թե՞ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, և "եթե" ԹՈՒՐՔԱ..., ապա կեցցե՛ ՀԱՅ հեղափոխությունը, և եղիցի՛ հայ հեղափոխականների միաբանությունը (դաշնակցությունը):

Իհարկե, խոսքը չի գնում աղանդավոր հեղափոխական կոչերի, բարիկադային դիրքերի ու փողոցային վայրիվերումների (և ոչ էլ ներկայումս գործող համանուն կուսակցության) մասին, այլ ՀՈԳԵՎՈՐ-մշակութային հեղափոխության, որի շունչն ու իմաստն է, որ պիտի հանդիսանան փրկարար ուղղություն տվող քամին ու առագաստը հայ մոլորյալ նավի համար այս փոթորկահույզ ծով-աշխարհում. "Յիսուս... Երբ նա նաւակ մտաւ, նրա յետեւից գնացին իր աշակերտները: Եւ ահա ծովի վրայ մեծ փոթորիկ առաջացաւ... Այն ժամանակ, վեր կենալով, սաստեց հողմերին եւ ծովին, ու մեծ խաղաղութիւն եղաւ" (Մթ. 8.23-26):

## Նշենք սույն հայ ՀՈԳԵՎՈՐ-մշակութային հեղափոխության բնութագրական կետերը՝

1) **Հեղափոխությունը պետք է հենված լինի ԶՏՎԱԾ ՀԱՎԱՏՔԻ վրա** (նշենք, որ ԶՏՎԱԾ ՀԱՎԱՏՔԻ իմաստաբանությունն առանձին ուսումնասիրման թեմա է: Աստվածաշնչում ԶՏՎԱԾ ՀԱՎԱՏՔԻ դավանաբանությունը կոչվում է ԿՅԱՆՔԻ ԳԻՐՔ (Հայտ. 20.12-15): **Տե՛ս Կ.Ե. "ԿՅԱՆՔԻ ԳԻՐՔ" աշխատությունը**)) : Եթե Թուրքահայաստանում հայ հեղափոխականները պայքարում էին մաուզերներով ու մոսին հրացաններով, ապա Թուրքահայաստանի մոդելը հանդիսացող ներկա Հայաստանում մեր ԶԵՆՔԸ պիտի լինի ԶՏՎԱԾ ՀԱՎԱՏՔԸ՝ Աստծո ճշմարիտ գիտությամբ իմաստաբանված. "ՈՒստի առե՛ք Աստծու սպառազինութիւնը, որպեսզի կարողանաք չար օրերում դէմ կանգնել չարին... ձեր մեջքերը զօտեպնդած ճշմարտութեամբ, եւ հագած արդարութեան զրահը՝ ձեր ոտքերը

ամրացրէ՛ք խաղաղութեան Աւետարանի պատրաստութեամբ: Եւ այս բոլորի վրայ, առէ՛ք հաւատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը: Եւ առէ՛ք փրկութեան սաղաւարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խօսքը" (Եփ. 6.13-17):

1/ա. ԽՍՏԻՎ ուշադրություն դարձնել, որ թուրք - քուրդ - աշիրեթ անվանարկումները մակերեսայնորեն չբանեցվեն (հայ ամբոխը դեռ վաղուց վարժվել է իր ստամոքս – հացի շրջանակները պահանջածի չափով չբավարարող ղեկավարությանը անվանել "թուրք"՝ չնայելով այս երևույթի օբեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներին: Սակայն նշյալ "թուրք" մակերեսային անվանարկումը պարզապես շեղում է ուշադրությունը իրական ԹՈՒՐՔ - վիրուսից) : Նաև սույն հեղափոխական գաղափարաբանության մեջ ԽՍՏԻՎ կերպով թույլ չտալ սոցիալական-նյութապաշտական շունչը (սոցիալական հարցերը պետք է լինեն ոչ թե գաղափարաբանության, այլ **կոնկրետ ծրագրերի** մեջ և սոցիալականը պետք է ծառայի ՄԻՄԻԱՅՆ ՀՈԳԵՎՈՐԻՆ, այլապես **անասնացման ժանգը** կրծելու է ամբողջ հասարակությանը): Այլ կերպ ասած՝ թույլ չտալ, որ այս հեղափոխությունը ստանա նեոբոլշևիկյան բնույթ :

2) Հաշվի առնելով այն, որ համենայնդեպս գտնվում ենք Հայ պետության մեջ (թեկուզ դեռ չձևավորված), ապա այս Հոգևոր վերափոխման (հեղափոխման) ընթացքը բոլորովին զերծ պետք է լինի պետականությունը խարխլող աղանդավոր հեղափոխական շարժումներին հատուկ գծերից:

3) Գործունեության որդեգրած սկզբունքը պետք է լինի ոչ թե ռևոլյուցիոն, այլ էվոլյուցիոն ընթացքը:

***Ինչպես 20 – րդ դարասկզբի ցեղասպանության շրջանում հայ ֆեդայի հեղափոխականները ընկած սար ու ձոր, վտանգելով իրենց՝ հայտնաբերում էին դեռ կենդանության նշաններ ցույց տվող հայերին, ինչպես քրդերի կողմից առևանգված հայ մանուկներին ետ էին գնում՝ յուրաքանչյուրի համար մեկ ոսկի փրկագին վճարելով՝ ապագա Հայաստանի համար "շիթիլ" դնելու նշանաբանով (տես Խ. Դաշտենց "Ռանչպարների կանչը", էջ 329 ) , այնպես էլ այսօր հոգևոր ցեղասպանության ընթացքում հայ հոգևոր հեղափոխականները պետք է հայտնաբերեն (թեկուզ մեկիկ – մեկիկ) դեռ քիչ թե շատ հոգևոր կենդանության նշաններ ցույց տվող հայերին : Առավելապես թուրքացած - աշիրեթ հոսանքների մեջ մոլորյալ ու դեռ որպես ՀԱՅ չձևավորված հոգիներին ("մանուկներին") պետք է կազմակերպված կերպով ետ գնենք՝ ամեն մեկ "հայ մանուկի" դիմաց վճարելով մեկ "ՈՍԿԻ" (Աստծո Խոսքը) ու ՇԻԹԻԼ դնենք ապագա Հայաստանի համար : Սա է անցյալում թերացած ու սխալները ժամանակին չուղղած ՀԱՅԻ պայքարի սրբագրող ճանապարհը :***

**4) Վերին խավից մինչև պարզ քաղաքացին պետք է հստակ գիտակցենք, որ եթե նշյալ Հոգևոր-մշակութային հեղափոխությունը չդառնա հայ իրականության միջուկը (թեկուզ թվաքանակով փոքր, բայց բյուրեղացած ու աճող տեմպով), ապա ասպարեզը ԼԻՈՎԻՆ ԳՐԱՎԵԼՈՒ ԵՆ ԱՂԱՆԴԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (մեծամասամբ՝ դրսից սնուցվող)՝ զանազան պիտակներով իրար ՀԱՋՈՐԴՈՂ, որոնց համար հումք են հանդիսանում թուրքացած հայության ստորին խավերը՝ լիովին քայքայելով հայ պետականության ու Հայ Հոգևոր արմատները:**

5) Պետք է ուսումնասիրել հայ ազգային հեղափոխական գործիչների գործունեությունը Թուրքահայաստանում՝ նկատի ունենալով նրանց կատարած

սխալները, թերի կողմերը և միաժամանակ վերցնել լավագույնը (այս առումով լավագույն նմուշներից է Ռուբենի “Հայ յեղափոխականի մը յիշատակները”՝ յոթ հատոր կազմող աշխատությունը) : Իհարկե, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ համապատասխանեցնելով արդի պահանջներին:

6) Պետք է գործել սիրով ու նվիրված՝ առաջին հերթին դեպի վերոհիշյալ հոգևորապես հիվանդ ու օտարացած երեք հայ զանգվածները՝ նրանց ՀԱՅ-ի շնչով (որի մեջ առկա է Աստվածայինը) կենդանացնելու նպատակով:

*Այո՛, գործել սիրո՛վ, միայն թե ՄԵՐ ասվածը չշփոթել աղանդավորների կողմից քարոզված “սիրո” կամ կեղծ քաղաքակրթության մատուցած անդեմ սիրալիրության հետ. “Եկեղեցին ... վերագնահատումի պիտի ենթարկէ քրիստոնէական սիրոյ իր սխալ ըմբռնումը, որպէսզի դադարի թուլութիւնը առաքինութիւն համարել եւ սպանել մեր ժողովուրդի կամքը … Քրիստոնեան նա չէ, ով քրիստոնէական վարդապետութեան տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մէջ եւ տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մէջ մի քիչ Քրիստոսութիւն կայ - մի կայծ ամենահզօր Աստուածամարդու հոգուց” (Գ. Նժդեհ “Հատընտիր”, էջ 69):*

6/ա. Այս նպատակով կարևոր է նկատի ունենալ, որ վերոհիշյալ երեք զանգվածներն ինչպես Թուրքահայաստանում, այնպես էլ ներկայումս իրար հանդեպ ունեն նույնատիպ (գրեթե պատճենահանված) դրսևորումներ:

……..

Ծանոթ.- *Քրդացած հայ աշիրեթները առավելապես խորթ ու վանողական են տրամադրված դեպի երիտթրքացած հայերը, իսկ վերջիններս արհամարհանքով ու բարձրից են նայում թե քրդացած, թե թուրքացած հայերին, չնայած նրան, որ ներկայումս (ինչպես հնում՝ հուրյաթի շրջան) քրդացած հայ աշիրեթները գտնվում են երիտթրքացած հայերի իշխանության ներքո և ստիպված արտաքուստ իրագործում են նրանց քաղաքական ու ռազմավարական ուղեգիծը՝ ընդհուպ մինչև թուրքացած հայերի հանդեպ ճնշումները: Իհարկե, կան որոշ քրդացած հայ թոռուններ, որոնք ձգտում են անկախ քաղաքականություն վարել ներքին քաղաքական ու կենցաղային ոլորտում: Օրինակ՝ ոչ վաղ անցյալում հայտնի քաղաքական գործիչներից մեկը, որը մանևրում էր թուրքացած հայերի հեղափոխական հարթության ու երիտթրքացած հայերի (թվացյալ ռուսական բևեռ) միջև, հավանական է, որ դաժանորեն ծեծվեց հենց քրդացած հայ աշիրեթների կողմից (իհարկե, որոշ քաղաքական շրջանակների գիտությամբ), նույնը տեղի ունեցավ նաև երիտթրքացած հայուհիներից մեկի հետ (վերջինիս արյունոտված դիմանկարը մի քանի օր գրավել էր հայ մամուլի էջերը), որը ամենայն հավանականությամբ քրդացած հայ աշիրեթների ու թուրքացած հայ վերնախավի համատեղ ջանքերով կատարվեց: Նմանատիպ երևույթները պետք է դիտարկել ոչ թե քրեական հետախույզի (սա թողնենք համապատասխան կառույցներին), այլ Հոգևոր-քաղաքական ակնոցներով, այսինքն՝ լինել իրատես (ինչպիսին էլ լինի իրականությունը), շարժումները զանազանել տեսակով, վերադասավորել ու տալ համապատասխան լուծում:*

*Թուրքացած իշխող հայ խավը ևս թաքցրած ատելություն ունի դեպի երիտթրքացած հայերը, բայց զգուշանում է, քանզի այսօր վերջիններս կեղծ “եվրոպական” արժեքները առանց այդ էլ պղտորված հայկական “ջրավազանը” լցնող յուրահատուկ խողովակ են հանդիսանում (սրանով իսկ հասկանալի է, որ նրանց թիկունքում կանգնած են արևմտյան ուժերը): Այս երևույթը շատ իշխող թրքացած ու քրդացած հայերի ստիպել է, որ իրենք էլ գոնե արտաքնապես եվրոպականացված “քայլվածքով” ճեմեն (որոշ թուրքացած աղաների ու հայ թոռունների բոի, տգետ ասիականացված կոպտությունն ու եվրոպական “նազանքը” համատեղած երևույթը իր ամբողջ պատկերով նկատողների մոտ շատ դեպքերում պարզապես ծիծաղ է շարժում):*

*Իսկ ինչ վերաբերում է թուրքացած հայ ցածր խավին, ապա նա հավասարապես (մեղմ ասած) խորթ նայվածք ունի թե դեպի քրդացած աշիրեթները, թե թուրքացած հայ վերնախավը: Չծավալվելով նշենք, որ ինչպես հնում, այնպես էլ հիմա այս երեք զանգվածները իրար հանդեպ խորթացած, անհաշտ դիրքերում են:*

……...

Այո՛, այօրվա թուրքա-Հայաստանում ամենափոքր տոկոսը կազմող ՀԱՅ-երի առջև բարդ խնդիր է դրված՝ մեթոդիկ քաղաքականությամբ ներթափանցել այս երեք շերտերի մեջ (հաշվի առնելով իրար հանդեպ տրամադրվածությունը և այլ գործոններ) ու Հոգևոր-մշակութային հեղափոխությամբ ՎԵՐԱԾՆԵԼ արդեն իսկ այլասերված կերպարով հայությանը՝ որպես ՄԵԿ ՀԱՅ ԱԶԳ՝ հիմնված մեկ հայրենիքի ու մեկ մշակույթի վրա: Սակայն պիտի նշենք, որ նշյալ կարգախոսը կմնա մեռյալ ու ծամծմված մի լոզունգ, քանի դեռ "մեկ մշակույթ" ասվածի մեջ Հոգևոր մշակույթը (Հավատքի գիտությունը) չի վերանայվել. այն պետք է ծածկագերծել ու ՀՍՏԱԿ իմաստաբանել:

7) Ներկայումս մեռած (կամ հիվանդ) հայության օրգանիզմից ածանցված վերոնշյալ պիղծ երևույթների "բժշկմամբ" զբաղվող հայ "բժիշկներ" ունենք, որոնք կամ շվարած են, կամ թուլամորթության պատճառով ամեն բան կորած են համարում, կամ ձգտում են մեռյալ իրականությանը գունագեղություն հաղորդել՝ զբաղվելով ինքնախաբեությամբ, կան "բժիշկներ" էլ, որոնք նմանատիպ խաբկանքի գույներ են հաղորդում իրականությանը՝ իրենց անաստված դասալքությունը թաքցնելու համար:

- ***ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ է մահացու (կամ թարախակալված) վերքն անվանել պարզ քերծվածք:***

*Թերևս կլինեն նաև անհատներ, որոնք այս ուսումնասիրությունը կանվանեն "պառակտիչ"՝ չնկատելով (կամ չուզենալով նկատել), որ հայությունը, ցավոք, վաղուց պառակտված է բովանդակային իմաստով: Քաղաքագետի լեզվով ասած՝* ***չի կարելի "ջայլամի" քաղաքականություն վարել՝ հայրենասիրության պիտակով:***

- ***ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ է նաև հիվանդության հանդեպ երկարատև անհոգ անտարբերությունը (կամ որ նույնն է՝ ոչինչ չփոխող "բժշկությունը"), քանզի ՓՏԱԽՏ ասվածին պիտի հանգենք (որի դեպքում նույնիսկ անխուսափելի անդամահատումը միայն տգետների ու դեմագոգների մոտ պիտի կոչվի "պառակտում"):***

*Այո՛, լինենք իրատես (որքան էլ այն ցավալի լինի): Ներկայումս հայության ահռելի զանգված հոգեբանությամբ քրդացած ու թրքացած է հանդես գալիս. իզուր չէ, որ "մի քանի օր" առաջ այն շատ հայերի մոտ արտահայտվում էր թուրք-աղայական (տե՛ս Ռաֆֆու "Խենթը", էջ 96 - 99), "երեկ"՝ սովետա-ապարատչիկական, այսօր՝ օլիգարխ-կլանային (ՏԻՊԻԿ ասիականացված երանգ ունեցող) վարքագծով:*

*Քանի դեռ ՈՒՇ ՉԷ, անհրաժեշտ է հայ օրգանիզմի վարակված մասը, առանձնակի դիտարկելով, ախտորոշել ու արագորեն անցնել բժշկման… Քաղաքական լեզվով ասած՝ քանի դեռ ՀԱՅ-ը լիովին Հոգևոր ցեղասպանության հարվածը չի ստացել օտարացած հայ զանգվածից, արդ պատմության հնոցում վառվող ՍՈՒՐԲ ԿՐԱԿԸ մեր սրտերում, նրա փորձառությունը մեր մտքերում ու Հոգևոր (ԵՐԿՆՔԻ) շնչով ՎԵՐԱՒՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ՝ արթնացնենք "ԴԵՊԻ ԵՐԿԻՐ" կոչը ու ազատագրենք հայ ներաշխարհը օտար վիրուսներից:*

*Այսօր հայ մահացու հիվանդ օրգանիզմին պետք են ԻՐԱՏԵՍ հայացքով, սառն ու հաշվենկատ մտքով, հայ օրգանիզմի հիվանդության պատմությամբ ("անկետա") ու ՀՈԳԵՎՈՐ գիտությամբ իմաստնացած և ՍԻՐՈ ջերմությամբ լի ԲԺԻՇԿՆԵՐԻ խմբավորում:*

**8) Ստեղծել Հոգևոր-մշակութային ակումբ, որն իր վրա պետք է վերցնի Հոգևոր ԻՐԱՊԵՍ ԲԺՇԿՈՂ-ՍՐԲՈՂ դեղատոմսի Ի ՀԱՅՏ ԲԵՐՈՒՄՆ ու նրա հետևողական ներմուծումը հայ օրգանիզմ (տե՛ս Կ. Ե. "ԿՅԱՆՔԻ ԳԻՐՔ", էջ 111):**
**8/ա. ՊԵՏՔ Է ՎԵՐԱՆԱՅԵԼ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ (տե՛ս Կ. Ե. "ԿՅԱՆՔԻ ԳԻՐՔ", էջ 106-112):**

……

Ծանոթ. – *Ներկայումս հայ հասարակության մեջ թուրք-աղայական ու քուրդ-աշիրեթական դրսևորումներն այդքան ընդգծված չէին լինի, եթե չլինեին հենց հայ "պարզ" զանգվածի կամա թե ակամա մեծարանքն ու ակնածանքը նրանց հանդեպ: Նրանց զեխ ապրելակերպի ու ճոխության, մարմնավոր զորության հանդեպ պիղծ նախանձն է, որ ընդգծում է նրանց ԹՎԱՅՅԱԼ հաջողակ լինելն այս կյանքում (խաբելով նաև վերջիններիս): Այս թյուր գնահատականը հետևանքն է հայ զանգվածի էության խեղման ու ՀՈԳԵՎՈՐ ՏԳԻՏՈՒԹՅԱՆ, սա հետևանք է Հայ եկեղեցու բացակայության (իր իրական իմաստով), քանզի վերոնշյալ "հաջողակները" պարզապես անասնացած ԹՇՎԱՌՆԵՐ են, առավել ևս այն դեպքում, երբ իրենց հատուկ "երջանկությունն" են ըմբոշխնում:*

- ***Այսպես է իմաստավորվում ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ մշակույթը, սա է ՀԱՅ-ի գնահատող հայացքը դեպի ՈՉ-ասուն (ան-ասուն) էությունն ու նրա վայելքները և ոչ թե նախանձով լի հայացք, որը գալիս է նյութապաշտությունից, իսկ վերջինս, փոխանակ սրբելուն, ավելի է ամրապնդվել կրոնամոլության ու սին բարոյագիտության քարոզներից:***

……

**9) Պետք է հայության մեջ վկայակոչել, լիարժեք ձևակերպել ու ներմուծել Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ) :**
**9/ա. Վերոնշյալում էականն այն է, որ ՀԱԳ - ը, որպեսզի բովանդակալից, կենսունակ ու հաստատուն արմատավորվի հայ ժողովրդի հոգում, պետք է, որ նրա միջուկը կազմի ՃՇՄԱՐԻՏ Քրիստոնեության (ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ) դավանաբանությունը (տե'ս Կ. Ե. "ԿՅԱՆՔԻ ԳԻՐՔ", էջ 5 -11) : Այլ կերպ ասած՝ պետք է ՀԱԳ - ը բարձրացվի ԻՄԱՍՏԱԲԱՆՎԱԾ Հավատքի աստիճանի :**

Կարևոր է նկատել, որ համատարած աղանդավորության (կույր հավատքի) պատճառով Քրիստոնեությունը արժեզրկված է ընկալվում, որը պատճառ է դառնում Հ Ա Գ – ը սնամեջ ազգայնամոլության արժեքով յուրացնելուն կամ այն լայն զանգվածների կողմից ընկալվում է որպես "ազգայնական" շաղակրատանք:

*ՀԱԳ - ի ուրույն ու ներկայումս հայտնի լավագույն արտահայտությունն է Նժդեհականություն (Յեղակրոնություն և Տարոնականություն) կոչված ուսմունքը: Հայ ազգի մեծագույն հերոսներից ու վսեմ գաղափարախոսներից մեկը՝ Նժդեհը, իր աջակիցների (Հայկ Ասատրյան ևն) հետ ուսումասիրելով **ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**, այն հանճարեղ կերպով **բյուրեղացնելով**, ստեղծագործել է **ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** ուսմունքը: Սակայն վերջինս ունի մեկ կարևորագույն թերիություն. սույն ուսմունքի մեջ Հավատքի գործոնը արտահայտվում է զուտ զգացմունքային շնչով, այսինքն՝ այստեղ առկա չէ **ՀԱՎԱՏՔԻ ՃՇՄԱՐԻՏ ու ՀՍՏԱԿ ԻՄԱՍՏԱԲԱՆՎԱԾ** դավանաբանությունը (իսկ Տարոնականությունը զուտ զգացմունքային երակով, ինչպես բացահայտ նկատվում է, ճշմարտապես յուրացնում են բացառիկ փոքրամասնությունը) : Նշյալ ԷԱԿԱՆ արժեքի պակասի պատճառով Յեղակրոնությունն իր մեջ է ներառել ավելորդ՝ միստիկ և այլ խորթ*

*(որոշ դեպքերում՝ Հոգևոր համակարգից շեղված) իմաստաբանություններ : Նկատելի է, որ Նժդեհը նման միստիկ ձևակերպումները ծառայացրել է հայ միտքն ու հոգին առավել բևեռելու հայ ազգային մշակույթի վրա : Սակայն նման միստիկական ձևակերպումները և որոշ չոր ազգայնական լոգունգաբանությունները պատճառ են դառնում այլոց կողմից Ցեղակրոնությունը շեղված (սնամեջ ազգայնամոլ կամ կրոնամոլ և այլն) կերպով ընկալելուն : **ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ (ՀՏՎԱԾ Քրիստոնեության)** դավանաբանությունը լիովին **սրբագրում - հարթում** է այս խորթությունները և Ցեղակրոնության մեջ որոշ դեպքերում արտահայտվող չոր լոգունգաբանություններին հոգևոր ու Աստվածային կենսունակություն հաղորդում :*

*Ինչպես նկատեցինք, Ցեղակրոն շնչի մեջ եղած կտրուկ ոճը, ազդեցիկ ռիթմը, ազգայնական ցիտատները դրական գործակից կարող են լինել, եթե տվյալ անձը մինչ այդ ունի հոգևոր - զգացմունքային - ազգային գեղագիտական ճաշակ, ինչով հիրավի հարուստ էր Նժդեհ անհատականությունը: Ցեղակրոնությունը նման է ԱՌԱՆՑ ՆՈՏԱՆԵՐԻ երաժշտության, որը շատ արագ կարող է աղանդավորվել այս կամ այն սնանկ հոգու մեջ "տեղավորվելով", քանզի այն չունի ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏՔԻ գիտության իմաստաբանությունը :*

*Նժդեհին կամ նրա ուսմունքը պայմանականորեն փոխադրելով երաժշտական ոլորտ՝ նրան կարելի է համեմատել հանրահայտ երգիչ Վլադիմիր Վիսոցկու ու նրա արդարության պայքարը երգող բանաստեղծական շնչառության հետ : Այսօր շատերն են ուզում նմանվել Վիսոցկուն՝ սեփական ձայնին արհեստականորեն խռպոտություն ու ազդեցիկ ռիթմ տալով և "պայքարող" - վերամբարձ տողեր երգելով : Սակայն ինչպես ամեն մի խռպոտ "երգեցիկ" ձայն դեռ չի նշանակում Վիսոցկի, այնպես էլ ամեն մի ցեղակրոն - լոգունգաբանություն դեռ չի նշանակում "Նժդեհ" կամ Հոգևոր - ազգային Էություն :*

*Համոզված ենք, որ Քրիստոնեական ՃՇՄԱՐԻՏ դավանաբանության պակասն է պատճառը, որ, հայության (գոնե ազգայնական հատվածի) մեջ, ցավոք, դեռ մինչ օրս Տարոնականության շքեղ ուսմունքը չի արմատավորվել :*

## 3. ՆԵՐԿԱ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՄԻՋԻՆ ՕՂԱԿՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՎԻՐՈՒՍԻ ՔԱՅՔԱՅԻՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԲԺՇԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

"Ազգ մը, որ **անընդունակ է իր անցեալի մէջ որոնել իր ներկայի խորհուրդը եւ ապագայի աստղը**- նման ազգը զուրկ է պատմական զգացումէ, որով՝ **նոր պատմութիւն կերտելու կորովէ եւ հանճարէ**" (Հ. Ասատրյան, "Հատընտիր", էջ 90):

Հայ պետականության երկարատև կորստի ցավագին հետևանքները նկատելի են ներկա պետական ապազգային ու հոգեխեղդ կառուցվածքի մեջ: Այսօր մեր պետական կառույցի մեջ նկատելի են որոշ երևույթներ, որոնք հատուկ են եղել վաչկատուն ցեղերին: Ամենապարզ հայացքով եթե դիտարկենք ներկա պետական ՄԻՋԻՆ որոշ օղակների (մարզպետարան, թաղապետարան և այլն) ներքին կողմը, ապա հստակ նկատելի է նրանց օրինաչափությունը քրդական աշիրեթների կառուցվածքի հետ: **Իհարկե, չենք ժխտում, որ կլինեն նաև բացառություններ**, սակայն պիտի նշենք, որ այս աղետաբեր երևույթը բավական տարածված բնույթ է կրում:

Այո՛, այսօր հայ համայնքների կենցաղը կառավարող շատ թաղապետարաններ (և այլն) իրենց կառուցվածքով և, ամենակարևորը, կառավարման եղանակով ու տիրող մթնոլորտով իրենցից ներկայացնում են ՏԻՊԻԿ քրդական աշիրեթներ՝ իրենց հատուկ պիղծ ու պրիմիտիվ բարքերով: Նկատի ունենանք, որ ինչպես հնում, այնպես էլ այսօր հայությանն անմիջականորեն առավելաբար կեղեքում ու յուրօրինակ կերպով այլասերում են քրդական աշիրեթ կոչված կառուցվածքները: Այստեղից էլ՝ հանո՛ւն հայությանը ԿՅԱՆՔ տվող ՀՈԳԵՎՈՐ - ԱԶԳԱՅԻՆ

արժեքների հանդեպ սիրո, հանո՛ւն ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ, հանուն ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ արժեքների՝ ՀԱՅ-երիս առջև կարևորագույն խնդիր է դրվում.

1) Ամենատարբեր մեթոդներով թույլ չտալ, որ համայնքապետեր (և այլն) առաջադրվեն ու ընտրվեն քրդացած հայ թոռունները, որոնք նախօրոք ունեն տիպիկ քրդական աշիրեթ հիշեցնող ձևավորված կառույցներ:

2) Իսկ եթե առայժմ անհնար է վերոնշյալ 1-ին կետը իրականացնել, ապա սույն համայնքների ներքին կազմակերպական կառուցվածքի ձևավորումը դնել Հայաստանի Ազգային ժողովի կողմից կազմված վերահսկող հատուկ մարմնի (իշխանական և ընդդիմադիր կողմերը համատեղ) տրամադրության տակ:

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ՝

**3) Եթե վերոնշյալ երկու կետերի իրականացումը երկար ժամանակ ու նոր օրենքներ է պահանջում, ապա հաշվի առնելով, որ տեղական ինքնակառավարման մարմինների անվան տակ հանդես եկող քրդացած հայ թոռունների իշխանության տակ են գտնվում տվյալ տարածքի (համայնք, մարզ և այլն) մշակութային օջախները՝ մանկապարտեզներ, դպրոցներ, մշակութային կենտրոններ և այլն, պետք է ԳՈՆԵ հատուկ հսկողություն սահմանել տվյալ աշիրեթ-կառույցի ՄՇԱԿՈՒՅԹԻ բաժնի գործունեության վրա, որպեսզի այն ՀՈԳԵՎՈՐ - Ազգային ուղղվածություն ունենա: Թեկուզ այս հսկողությունը լինի միայն հասարակական կարգով՝ Հոգևոր-ազգային ուժերի կողմից (եթե հնարավոր չէ համատեղ՝ պետական մեխանիզմով):**

3/ա. Այս գործը կարելի է կատարել՝ նաև դաշնակցելով Արևմտյան համապատասխան կառույցների հետ: Կարծում ենք, որ արևմուտքում ևս կլինեն ճշմարիտ Հոգևորը **թեկուզ ընդհանրական շնչով** յուրացրած ուժեր, որոնք ևս շահագրգռված կլինեն այս հարցում, քանզի Հայաստանի ճշմարիտ հոգևոր վերածնունդը նաև համամարդկային արժեք է: Այլ կերպ ասած՝ պետք է **ՀՈԳԵՎՈՐ հարթության վրա վերակենդանացնել Սան – Ստեֆանոյի 16-րդ հոդվածը**, այն է՝ **ապաթուրքացնել** հայ իրականությունը՝ Անդրկովկասում ձևավորելով հիրավի հոգևոր – մշակույթային հզոր կենտրոն՝ սրան համապատասխան ներդաշնակ քաղաքականությամբ (միաժամանակ սրբագրելով անցյալի դիվանագիտական սխալները՝ եվրոպական կառույցների հետ դաշնակցելու հարթության մեջ) :

*Ծանոթ. - Անհրաժեշտ է հայկական քաղաքականության մեջ սրբագրել պոետական հայացքը՝ ուղղված դեպի քաղաքակրթության “անմնացորդ” պաշտպան Եվրոպան (Արևմուտքը): Արևմուտքը ինչպես հնում, այնպես էլ այսօր որոշակի պատկերացում ունի թուրք-խավարամիտ զանգվածի և միայն նրան հատուկ հղփացած, ասիական, գռեհիկ … վարքի ու շահատակությունների մասին: Ներկայումս Արևմուտքը թուրքացած հայերին ստիպում է (թեկուզ՝ ձևական) ընդունել իրենց հակումներին ու իղձերին ոչ հարիր արժեքներ՝ դեմոկրատիա, օրենքի իշխանություն, խոսքի ազատություն, սահմանադրական բարեփոխումներ… վերջապես՝ ազատ-ժողովրդավարական ընտրություններ և սրանից բխող արդար իշխանության ձևավորում,* ***որոնք լիովին օրինաչափվում են անցյալում եղած “մայիսյան” բարենորոգումներ (1878-1912 թթ.) կոչված իրադարձությունների հետ,*** *որոնք իբր թե կոչված էին հայկականությունը պաշտպանելու (Հայ ԴԱՏ) և թուրանականությանը հակակշռող հայկական ձևավորված օջախ ստեղծելու: Սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, շատ դեպքերում, իր գլոբալ քաղաքական-նյութական*

*շահերից մղված, Արևմուտքը շահարկեց իր իսկ կողմից ստանձած հայկական (հոգևոր) արժեհամակարգի պաշտպանի դերը:*
*Նույնն է նաև այսօր. թելադրող ու զանազան հսկողական ֆունկցիա կատարող արևմտյան կառույցների (ԵԱՀԽ՝ եվրոպական "անաչառ" դիտորդների հանձնախմբեր, միջազգային վայրուտային ֆոնդ և այլն) հայացքի ներքո հայ բնօրրանում թուրքացած շունչը գնալով ավելի է խեղդում հայկականությունը: Սա է պատճառը, որ հնի նմանությամբ ներկայումս նույն ընթացքն արձանագրվեց Հայ ազգային զարթոնքի մեջ (1988-1996 թթ.)՝ մեծ ու կույր հույսեր դեպի առաջադեմ, քաղաքակիրթ Արևմուտքը և սրան հաջորդած ծանր հիասթափություններ ու կազմալուծում հայկական շարքերի մեջ:*
*Նկատի ունենալով առկա օրինաչափ երևույթները՝* ***Չի կարելի՝*** *ա) լիովին (կուրորեն) վստահել Արևմուտքին, բ) անտեսել Արևմուտքը՝ ընկնելով քաղաքական վակուումի մեջ, գ) ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ վստահել թուրք-աշիրեթ վիրուսով վարակված հայ տարրերի երիտ-քաղաքակիրթ-արևմտացած "դիմագծերին", դ) թևաթափ լինել՝ կազմալուծվել:*
*Չնայած այս բոլորին, ի տարբերություն անցյալի՝ ներկայումս առկա են գոնե որոշ կարևորագույն մխիթարիչ տարբերություններ. եթե անցյալում քաղաքական հարթության վրա թուրքերը իրենց հայախեղդ "գործընթացում" ձրիաբար օգտվում էին Ռուսաստան-Արևմուտք, նաև արևմտյան տարբեր երկրների տարատեսակ բախումներից (սույն երևույթը ոչ այնքան թուրք ուղեղի արգասիքն էր, ինչպես տարածված է ճոռոմաբանել թուրք դիվանագիտություն ասվածի մասին), եթե նույնիսկ անկախ Հայաստանի տեսլականը, մեղմ ասած, ռուս (կամ շատ դեպքերում՝ նաև արևմտյան) դիվանագիտության աչքի փուշն էր, ապա այսօր հայ ներ - "ազգային" իրականության մեջ հոգևոր հարթության վրա թուրքացած - աշիրեթ հոսանքներին խրախուսող և հովանավորող նման ԳԼՈԲԱԼ, ռազմավարական, քաղաքական դիվիդենտներ չկան (և այլն):*

***Անհրաժեշտ է դաշնակից Արևմուտք հասկացությունը շերտավորել՝ 1) քաղաքական-տնտեսական-նյութական մեքենա, 2) հոգևոր - մշակութային - բարոյական կառույցներ, շերտեր, խավեր ու անհատ գործիչներ:***

*1) Առաջին հարթության վրա պետք է գտնել Հայաստանում (նաև՝ տարածաշրջանում) հայկական ու արևմտյան շահերի համադրման կետերը և սրա վրա ամրացնել հայկականության արմատավորմանը նպաստող քաղաքական գործընթացները:*
***2) Երկրորդ հարթության վրա պետք է կատարել առավել մանրակրկիտ ուսումնասիրություններ և ծավալուն ու հետևողական աշխատանքներ՝***
*ա) հայ-արևմտյան համապատասխան կառույցների կողմից հոգևոր-գաղափարական արժեհամակարգի* ***ՃՇԳՐՏՈՒՄ*** *(առավելապես՝ ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ դավանաբանության առումով),* ***ՀԱՄԱՏԵՂ*** *ճանաչում, հաստատագրում ու այն որպես առաջնորդող գաղափարի ընդունում,*
*բ)* ***համապատասխան ռազմավարության ընդունում:***
*Այս թվում՝ առավել ի նկատի ունենալ, որ ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ (ՁՏՎԱԾ Քրիստոնեության) դավանաբանությունը հանդիսանում է բոլոր ԴԱՍԱԿԱՆ ծածկագրյալ կրոնների՝ "Քրիստոնեության", Մուսուլմանության, Բուդայականության ԲԱՆԱԼԻՆ : Սույն ԲԱՆԱԼՈՒ շնորհիվ վերոնշյալ կրոնները ոչ թե կուրորեն (այս կամ այն կերպ) իրար են հակադրվում, այլ վերջիններս ծածկագերծվելով՝ մեկ Աստվածային դավանաբանության մեջ են օրինաչափվում: Այո՛, ԱՍՏՎԱԾ ՄԵԿ է լոգունգը ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ դավանանքով վերածվում է հստակ ու իմաստաբանված գիտության: Սա է ներդաշնակ աշխարհի կառուցման գրավականը :*
*գ)* ***վերջինս բաժանել մարտավարական ծրագրերի՝*** *հստակորեն փուլ առ փուլ բաժանված: Այս առումով նկատի ունենալով երիտթուրք-աշիրեթ-թուրքացած հոսանքների հակադրությունները՝ խիստ զգույշ (առանձնակի) կերպով օգտագործել տիպիկ (ոչ թե ձևական) երիտթուրքացած ուժերը՝ ուղղակի և անուղղակի:*
---

*Ծանոթ. -* ***Արևմտյան կառույցներին դաշնակցելու առումով շատ կարևոր է****, որ մենք կույր ու անդեմ չհակադրվենք գլոբալիզացիա հասկացությանը:* ***Այլ է, որ այս երևույթը պետք է դրվի հոգևոր-ազգային ու համամարդկային մշակույթ պարունակող հիմքի վրա:*** *Ներկայումս ընթացող հակագլոբալիստական շարժումը իրենից ներկայացնում է անդեմ, կազմալուծման տանող քաղաքական ԹԱԿԱՐԴ : Հայկականությունը ոչ միայն երբեք դեմ չի եղել համաշխարհային քաղաքակիրթ ընտանիքի ձևավորմանը, այլև դարեր շարունակ եղել է նրա առաջամարտիկը: Եթե այսօր Եվրոպան որպես քաղաքակրթության օջախ է հանդես գալիս (խոսքը իրական արժեքների մասին է), ապա սրա մեջ մեծ տեղ ունեն հայերը: Քանզի արաբ-մոնղոլ-թուրանական ասիաշունչ խավար հոսանքների դեմ միակ ռեալ ուժը, որ փակում էր ճանապարհը դեպի Եվրոպա, հայկական գործոնն էր: Վերջինս ոչ միայն արտահայտվում էր վերոնշյալ պիղծ հոսանքների դեմ անկախ կամ կիսաանկախ Հայաստանի գոյապայքարով, այլ դեպի Եվրոպա տանող այն արգելապատնեշը, որ կոչվում էր Բյուզանդական կայսրություն, իր ամենաօրհասական պահերին դիմադրում, դիմակայում, ծառանում և իր երկրորդ շնչառությամբ հակահարված էր տալիս թշնամուն՝ շնորհիվ հայկական ոգին ու հայ ռազմուժը իր միջուկում ունենալու:*

*Այո՛, հայերն աստիճանաբար իրենց ուսերի վրա կենտրոնացրին թե Քրիստոնյա մեծ կայսրության ղեկավարման, թե նրա պաշտպանության գործը: Բյուզանդիայի պաշտպանության գործընթացի մեջ էին ներգրավել հայ հռչակավոր հեծելազորային գնդերը, երևելի զորավարները, Մամիկոնյան կամ մյուս նախարարաց տները: Հայկական հեծելազորը կռվում էր Փոքր Ասիայից մինչև Եգիպտոս: Ուժերի այս ցրումից ինչ-որ տեղ տուժում էր Հայաստանի ինքնապաշտպանությունը, սակայն հայերը չէին կարող և չլքեցին համաքրիստոնեական ու քաղաքակրթության պայքարի ճակատը: Հատկանշականն այն է, որ Քրիստոնյա (քաղաքակիրթ) աշխարհի բոլոր մեծ տագնապների ժամերին Բյուզանդիան իր ճակատագիրն հանձնեց հայ կայսրերին, զորավարներին, որոնք ղեկավարեցին նրան՝ մասնավորապես 6-րդ դարի վերջերից մինչև 11-րդ դարի սկզբները: Մավրիկիոս և Հերակլ կայսր-զորավարները հայկական գնդերի հետ վերջնական խորտակիչ հարված հասցրին չնայած արիացեղ, բայց և ասիաշունչ Սասանյան Պարսկաստանին: Լևոն Իսավրացին, Վասիլ 1-ը, Հովհաննես Չմշկիկը կանգնեցրին և հետ վանեցին հետադիմական իսլամ ավերիչ շարժը: Հայազգի այս կայսրերին է վերաբերվում պրոֆ. Կարլ Ռոթի արժևորումը. ՈՒժի հանճարեղ մարդիկ, գերազանց սպարապետներ: Իզուր չէ, որ Բյուզանդական պատմության մասնագետներից Բըսըլն ասել է.Միմիայն Հայաստանի լեռներում էր գտնվում Բյուզանդիայի սիրտը, կորովը և քաղաքականությունը:Բյուզանդիայում "ամենազորավոր ազդեցությունն են գործում հեռակա այս երկրի սովորույթներն ու հավատալիքները": Հայերից էր, որ նա ստացավ "ռազմական զորավոր և հարձակողական ոգին":*

*Դեպի արևմուտք (Եվրոպա) ընթացք բռնած արաբական ուժերին 717թ. Կ. Պոլսի մատույցներում ջախջախիչ հարված տվեցին հենց հայազգի կայսր Լևոն Իսավրացին և իր որդին՝ Կոստանդին 5-րդը: Ահա թե պրոֆ. Բըսըլն ինչպես է արժևորել նշյալ իրադարձությունները. Անկասկած, սա Բյուզանդիայի և հավանաբար Եվրոպայի պատմության ամենատագնապալից շրջանն էր... Երկու այս կայսրերը, որոնք վեր են բարձրանում ժամանակակից ուրիշ կայսրերի և անձնավորությունների ցածրագույն մակարդակից,* ***ՅՈԹ ԴԱՐՈՎ ՀԵՏԱՁԳԵՑԻՆ*** *իսլամի հաղթական մուտքը Կ. Պոլիս... Բյուզանդիոնը՝ Եվրոպայի դռների առաջ կանգնող այդ ՊԱՀԱԿԸ, երբեք լավագույն կերպով կամ ավելի հավատարմաբար չկատարեց պարտականությունը... և դրա համար պետք է շնորհակալ լինենք Լևոնի և իր որդու լեռնական արի ոգուն(ընդգծումը – հեղ.):*

*Կարելի է մի պահ ենթադրել՝ եթե նշյալ ավերիչ հոսանքը (հատկապես իր առավել ուժեղ ժամանակաշրջանում) յոթ դար առաջ ներխուժեր Եվրոպա, ինչպիսի՞ն կլիներ համամարդկային պատմությունը, օրինակ, միայն արդի Գերմանիայում տեղ գտած 3 մլն. թուրքերի (և այլոց) թվաքանակը որքա՞ն կկազմեր ... և ընդհանրապես Գերմանիան*

*արդյո՞ք իր Բիսմարկը (միասնականացումը) կունենար, Ֆրանսիան՝ Նապոլեոնն ու Դը Գոլը ...* ***արդյո՞ք այսօր Եվրոպական քաղաքակրթության հետքն իսկ կմնար:***
*Իսկ հայկական դինաստիաներից մեկը՝ Իսավրյանը (717 - 802թթ) Բյուզանդական զահ բարձրացավ Անատոլիկոն բանակաթեմի հայազգի զորավար Արտավազդի օգնությամբ: Արաբներին բեկումնային՝ ծանր հարվածներ հասցրեց նաև կայսրուհի Թեոդորա 1-ի (842-856, ծագումով հայ) եղբայրը՝ զորավար Պետրոնաս ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ: Իր հերթին ռազմական տաղանդով փայլեց Մլեհը (Մելիաս), որը հիմնադրեց Հայկական Լիկանդոս բանակաթեմը: Բյուզանդիայի արևելքում ստեղծվեցին նոր բանակաթեմեր, որոնք բյուզանդական աղբյուրներում կոչվում են ՀԱՅԿԱԿԱՆ (տես Հ. Ս. Հանրագիտ., հ 2, էջ 462): Կայսերական արքունիքում կարևոր դիրք էին գրավում Թոռնիկյանները (Մամիկոնյան տոհմի ճյուղերից):*

*Ահավոր կռիվներ մղեց նաև Բագրատունիների Հայաստանը՝ արաբ և սելջուկ-թուրքերի դեմ: Սակայն սպանիչ հարվածը ստացավ ոչ այնքան արևելքից, որքան թիկունքից՝ կեղծ արևմտյան հոգևորազուրկ քաղաքակրթության՝ մեջ ճահճացած ուժերից: Այս դավաճանական հարված հասցնողը հայկականությունը մեծամտաբար արհամարհող հույն սնոտիապաշտ կղերական զանգվածն էր, որին հաջողվեց Բյուզանդիական կայսրության մեջ թուլացնել հայկականը և* ***սրանով իսկ փորեց հենց իր գերեզմանը:*** *Հայկական գործոնը չեզոքացնելու ձգտող Բյուզանդիայի կայսր Կոնստանտին Մոնոմախոս կայսրը (1042-1054թթ.) խաբեությամբ Կ.Պոլիս հրավիրեց և կալանավորեց Գագիկ 2-րդ Բագրատունուն՝ նրանից պահանջելով հրաժարվել հայկական թագից և Անին հանձնել Բյուզանդիային: Հայոց քաջ թագավորը հերոսաբար դիմակայեց, որի պատճառով աքսորվեց ու տմարդի կերպով սպանվեց: Հայաստանը մատնվեց քառասային վիճակի, որից օգտվեցին սելջուկները, որոնք պաշարեցին ու ավիրեցին հրաշագեղ Անին: Հույն փչացած հոգևորականության դավադիր խաղերի պատճառով ոչնչացավ Քրիստոնեական քաղաքակրթության ամենափառավոր կոթողը: Անիի հետ կործանվեց և Բյուզանդիայի դարավոր առաջադիրքը՝ ՀԱՅԿԱԿԱՆ բերդը, որի հովանու տակ այլասերված հույն տարրն անարժանաբար իրեն երևակայում էր աշխարհի առաջնորդ: Բացվեց թուրքերի ճամփան դեպի Կ.Պոլիս ու Եվրոպա:*

*Չնայած այս ծանր հարվածներին՝ հայորդիները չլքեցին քաղաքակրթության վտանգված ճակատի պահակությունը: Ռուբեն իշխանի ղեկավարությամբ հարյուր հազարավոր հայեր այս անգամ ուղղակի դիրքավորվեցին Կիլիկիայում: Տավրոսի լեռների վրա, Երուսաղեմի և Բյուզանդիայի միջև նրանք բարձրացրին խաչի դրոշը (1080թ.): Շուտով պատմությունն եկավ հաստատելու. որ այս ամենը ոչ միայն հայության բնավորման ու նոր հայկական պետության կայացման, այլ նաև համամարդկային արժեքն ուներ. սկսվեց խաչակիրների արշավանքը, որի ամենաապահով հանգրվանը հանդիսացավ հայկական Կիլիկիան: Խաչակիրների առաջին թափորը՝ հոգնած, սպառված ու սովատանջ, Կիլիկիա նետվեց 1098թ.: Նույնն էր նաև հաջորդ թափորների ընթացքը, որոնք Հայաստան էին հասնում դառնացած՝ կեղծ քաղաքակրթությունը որդեգրածների (հույների) չկամությունից ու շատ դեպքերում՝ թշնամանքից: Այս առումով հայկական գործոնի կատարած դերի մասին կարելի է պատկերացում կազմել Գրիգոր 13-րդ պապի՝ էկկլեզիա ռոմանա՝ կոնդակի հետևյալ խոսքերից. «... հայ ազգի ուրիշ արժանիքների մեջ կա մեկը, որ վսեմ է և առանձնապես հիշատակելի. դա այն է, որ երբ Քրիստոնյա իշխաններն ու բանակները գնում էին Սուրբ Երկիրն ազատելու,* ***Ո՛Չ մի ազգ և Ո՛Չ մի ժողովուրդ այնպիսի հոժարությամբ և եռանդով օգնության*** *չհասավ խաչի զինվորներին, ինչպես հայերը: Նրանք հայթայթեցին զորք, զենք, ձիեր, ռոճիկ, պաշար, խորհուրդ և ամեն կարգի նպաստներով սրբազան այս պատերազմներում զորավիգ եղան խաչակիրներին իրենց բոլոր ուժերով, ամենամեծ արիությամբ ու հավատարմությամբ՝(ընդգծուները – հեղ.):»*

*Հատկանշական եղան հայ-գերման կապերը: Հայաստանում մեռած Ֆրիդրիխ Բարբարոսա Շիկամորուս կայսրը (խեղդամահ եղած Կալիկադնոս գետում) և իր որդին՝ Հայնրիխ 6-րդը, Կիլիկիայի հայկական իշխանությանը բարձրացրին թագավորության*

*կարգավիճակի: Ռուբինյան իշխան Լևոն 1-ը իր թագը ստացավ Հայնրիխ 6-րդից (1198թ.) և այլն:*

*Սակայն ինչպես գիտենք, Եվրոպան հետագայում նահանջեց արևելքից և հայ ժողովուրդին նորից ու նորից վիճակվեց մենակի դյուցազնական պայքարը խավարի դեմ: Կիլիկիան ընկավ 1375թ: Սակայն սա էլ չընկճեց հայկական էությանը, քանզի հայոց բուն պայքարը ՀՈԳԵՎՈՐ հարթության վրա է, և սա հայկական պատմության մեջ տեղի տվեց մի յուրօրինակ երևույթի, որը Մարկովը արժևորում է հետևյալ կերպ. ՙիշխեց քաղաքանապես իրեն նվաճողների վրա:՚ Այս հոգևոր խմորումն էր, որ նորանոր միջոցներ էր գտնում Հայաստանի փրկությանը և Եվրոպական քաղաքակրթության պաշտպանությանը ծառայեցնելու համար: Այս միջոցներից էին անգամ նրա առևտրական կազմակերպությունները, որոնց քարավանների ՙհետքերով՚ Եվրոպայի մտավորական, բարոյական և քաղաքական ազդեցությունը թափանցում և հող էր գտնում Արևելքում:*

*Նաև Եվրոպայում հայերը հաստատում էին լուսավորության օջախներ (վանքեր, դպրոցներ, տպարաններ) և մտավորականներ, գրականություն հասցնում Հայաստանին:*

*Չբավարարվելով այս ամենով՝ Եվրոպայի ծանրագույն պահերին (16-18 դարեր), այսինքն՝ այն օրերին, երբ թուրքերը ծեծում էին նրա ճաքճքած դռները, նորից ու նորից հայերն էին, որ ելք գտան՝ պարսիկներին զինակցելով ու դրդելով նրանց հակաթուրքական լայն ճակատ բացելու: Այո՛, հայերն էին, որ հանդիսացան մեկը այն գլխավոր գործոններից, որի շնորհիվ նախ՝ Պարսկաստանում տիրապետեց Սեֆյանների հզոր արքայատունը, և վերջինս սկսեց լայնածավալ պայքար մղել թուրքերի դեմ՝ տկարացնելով սրանց հարձակողական թափը Եվրոպայում: Այս ճակատամարտերից շատերը մղվեցին Հայաստանում, որի քաղաքները 200 տարվա ընթացքում կործանվեցին գրեթե 100 անգամ: Բայց և այնպես հայերը, դրամով և զինապես օգնելով պարսիկներին, անդադար կռվի հրավիրեցին օսմանցիների դեմ:*

*Ի՞նչ էր մնալու Եվրոպայից, եթե այդ ճակատագրական ժամանակաշրջանում Սաֆեան Պարսկաստանը երկրորդ ճակատ չբացեր թուրքերի դեմ: Իսկ որ հայերը մեծ ազդեցություն ունեին Պարսկաստանում, վկայում է թեկուզ այն, որ վերջին դարաշրջանների պարսից արքաների գլուխ գործոց Նադիր Շահը հռչակվելիս իր սուրն օրհնել և մեջքին կապել տվեց հայոց Աբրահամ կաթողիկոսի ձեռամբ:*
*Իհարկե, առանց Պարսկաստանի էլ հայերը երկար ու դաժան կռիվներ մղեցին թուրքական հոսանքի դեմ, օրինակ Դավիթ Բեկի օրոք (1722-28թթ.) հայկական գործոնը նորից ծանր հարվածներ հասցրեց նրանց:*

*Այո՛, Հայ ԱԶԳԸ (հայ ՏՈՀՄԻԿ հավաքական կերպարը) մեկ բազուկով պայքարելով ներքին ճակատում, այն է՝ Մուշեղ Մամիկոնյաններին … Մխիթար սպարապետներին դավադրաբար սպանող ուժերի և Հալիձոր … Ղարս բերդերի դռները թշնամու առաջ ներսից դավաճանաբար բացողներիր (ներքին տականքի) դեմ, մյուս բազուկով արտաքին ճակատում կատարեց գրեթե անհնար թվացող խոյացումներ, որոնք կարող են զարդարել ցանկացած քաղաքակրթության արժեհամակարգը:*

*Ինչե՞ր չարեց Տոհմիկ հայկական էությունը թե յուր ուժերով, թե այլ՝ փրկելու Եվրոպան, նրա ներսում տեղ գտած Քրիստոնեությունն ու քաղաքակրթությունը: Իզուր չէ, որ ցեղաբանության հայտնի ուսուցչապետ Հետտնը, ուսումնասիրելով վերոնշյալ ժամանակաշրջանը, կամա թե ակամա բացականչել է. ՙհայերը հպարտ լինելու որքա՜ն իրավունք ունեն:՚ Ցավոք, Եվրոպայի ու քաղաքակրթության դարավոր առաջամարտիկները շատ դեպքերում խաչվեցին հենց եվրոպական երկդիմի քաղաքականության ձեռքերով: Ժամն է, որ արևմուտքում առաջ գան ուժեր, որոնք սրբագրեն կամ հանդես գան սրբագրելու իրենց քաղաքականությունը հայկական երևույթի նկատմամբ:*

*Եվրոպական հոգևոր-մշակութային քաղաքակրթությունը դավանող Արևմտյան ուժերի առջև այսօր հոգևոր-պատմական թեկուզ պարզ տրամաբանությունը առնվազն դնում է հետևյալ կետերը.*

*ա) Ամեն կերպ նպաստել իրապես ՏՈՀՄԻԿ հայկական ուժի ձևավորմանը՝ հատկապես Հայաստանում (նաև կովկասյան տարածաշրջանում),*

*բ) Չսատարել խորքի մեջ հակահայկական և արևմտյան հոգևոր-մշակութային արժեքները կեղծաբար կրող հոսանքներին (բյուզանդական հույների քայքայիչ դերը ներկայումս գրեթե պատճենահանված կերպով ստանձնել են տարածաշրջանում՝ վրացական գործոնը, Հայաստանում՝ երիտթրքացած հայերի կառույցները և այլն),*

*գ) Խուսափել որևէ հատվածական ժամանակաշրջանում կայծկլտող խայծերից, այն է՝ մանր ու մեծ ՊԱՏԵՀԱՊԱՇՏ շահերից, որոնց յուրացնելու գայթակղությանը տրված, ինչպես հնում, այնպես էլ այսօր թուրքացած հոսանքին են զիջվել ԷԱԿԱՆ արժեքները՝ այդ թվում՝ հայկական գործոնը (վկա՝ ներկայումս արևմտյան հոգևոր-մշակութային արժեքների ճանաչման, մատուցման և յուրացման ցածր մակարդակը թե Հայաստանում, թե տարածաշրջանում, թե..., թե հենց Արևմուտքում):*

*դ) ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ (ԶՏՎԱԾ Քրիստոնեության) դավանաբանությունը ճանաչել որպես ՃՇՄԱՐԻՏ Հոգևոր զենք և սրանով իսկ սպառազինված հայկական կառույցներին թույլ տալ ՆՈՐԻՑ ստանձնելու Քրիստոնեական քաղաքակրթության պատնեշի (ՆՈՐ՝ ՀԱՅԿԱԿԱՆ Բյուզանդիայի) պահպանության դերը: Վերջինիս հուսալիության վկայագիրը պատմության ձեռքումն է:*

*Այո՛, անհրաժեշտ է տարածաշրջանում առնվազն հոգևոր հարթության վրա ձևավորել նորատիպ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԻԱ (սրանից բխող ենթաձյուղերով՝ նյութական-տնտեսական բազա և այլն): Սա պետք է լինի Արևմուտքի հետ դաշնակցելու ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ (թերևս նաև Հայաստանի Հանրապետության) արտաքին քաղաքականության դոկտրինը:*

---

3/բ. Անհրաժեշտ է, որ Քրիստոնեությունը որպես պետական դավանանք ընդունելու 1700 ամյակն արդեն իսկ տոնած հայության զանազան կառույցների մշակույթի բաժնի աշխատակիցները **ԳՈՆԵ** ծանոթ լինեն Աստվածաշնչին (**ՔԻՉ** է սին բարոյագիտության լոզունգներով լեցուն արհեստավարժ լինելը, այս ոլորտում առավել քան անհրաժեշտ են հայ **ՀԱՎԱՏԱՎՈՐՆԵՐ**):

……

Ծանոթ.- *Ամենապարզ հայացքն իսկ ցույց է տալիս այս բնագավառում քրդական աշիրեթի կուլիսներին հատուկ շունչը. շատ դեպքերում մշակույթի բաժնի պետեր են նշանակվում քրդացած հայ թոռունի "պարզունակ" մտերմուհիները (հաճախ՝ "մի փոքր" կասկածելի բարք ունեցող), որոնց համար (իրենց կողմից այդպես էլ չհասկացված) Հոգևոր, Հայ կամ Համամարդկային հասկացությունները լոկ միջոց են՝ վայելելու քրդական (կամ սուլթանական) "արքունիքին" հատուկ "քաղցր - մեղցր" բարքերը: Իսկ վերջիններս, ինչպես հատուկ է բրգաձև կառույցներին, իրենց ստորադրյալներին գրեթե անթաքույց ընտրում են սեփական՝ աշիրեթական ճաշակի համեմատ: Այո՛, այսօր մշակույթի ասպարեզը կառավարող հայ թոռունի մտերմուհիները (որոնց հոգևոր ընկալումներն իրենց պարֆումերիայից այն կողմ չեն անցնում) շատ դեպքերում հանդես են գալիս որպես ՈՐՈՇԻՉ ուժ՝ այս կառույցներում կադրային քաղաքականության և այլ կարևոր հարցերի մեջ:*

*"Դեմ" չենք, որ "հայ" թոռունները հարեմ ունենան, "միգուցե" ներկա "քաղաքակրթությունը" դա է պահանջում, սակայն գոնե պետք է ԱՐԳԵԼԵԼ այս ՀԱՐԵՄԻ մուտքը պետական քաղաքականություն: Նույնիսկ Խորհրդային շրջանում նկատելի էր այս կամ այն*

*բարձրաստիճան ապարատչիկի հարեմի "գործունեության" որոշակի բաժանումը պետական քաղաքականությունից: Պատկերացրեք այս կառույցներում գործող ՀԱՅ-երի վիճակը, որոնց գործունեությունը կախված է հարեմի այս կամ այն ("բարձր" կամ "ամենացածր") ներկայացուցչի քմահաճույքից:*
*"Հայ" թոռունների կողմից սինքորաբար խրախուսված այս հարեմի ցինիկ շարժ ու ձևերը և ճղճիմ ինտրիգային գործունեությունը պետական կառույցներում առնվազն շարքային ծառայողների շրջանակում վարկաբեկում է ՀԱՅ պետություն հասկացությունը, անկախության գաղափարը, ծնում օտարամոլություն կամ "տեղական" ստրկամտություն և ստեղծում է մթնոլորտ, որտեղ իշխում են հետևյալ կարգախոսները. "Սա է "հայկական" միջավայրի ապրելակերպը, սրանք են "ճիշտ" ապրելու կանոնները, այստեղ ամեն ինչ որոշվում է … "*
……..

**Ո՞ՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ՝ ՀԱՅԵՐՍ, ԹՈՂՆՈՒՄ ՄԵՐ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ,** իսկ վաղը այդ **Ո՞Վ** և այդ **Ո՞Ր** անհեթեթ պնդումով պիտի պահանջի ամենատարբեր բնագավառներում հանդես եկող **ՕՐԻՆԱՎՈՐ ՀԱՅ** քաղաքացիներ: Մի՞թե պարզ չէ, որ **ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ** պատասխանը լինելու է մեկը. "Ինչ որ ցանել ես, այն էլ պետք է հնձես…":
Հայության ներուժը փոշիացնելու առումով թե ներկա, թե գալիք սերունդը միգուցե կների հայ քաղաքական (և այլ) գործիչների ոչ արհեստավարժ լինելը, միգուցե ներողամիտ գտնվի այս կամ այն իշխանավորի հանդեպ, որ բազում դրվագներում այս կամ այն գայթակղությանն է տրվել, ԲԱՅՑ
**Ո՛Չ ՀԱՅ ԱԶԳԸ ԵՎ Ո՛Չ ԷԼ ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԲԵՔ ՉԵՆ ՆԵՐԻ ՆԵՐԿԱ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ՔՐԴԱՑԱԾ ԱՇԻՐԵԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ ԳՈՐԾՈՂ ԹՈՒՐՔԱԲԱՐՈ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ :**
Սա ցանկություն չէ, ոչ էլ անհատական կարծիք, այլ ՀԱՅ-ի նկարագրի ճանաչողությունն է, որ մեզ թելադրում է նման կերպով արտահայտվել: Նկատի ունենանք, որ ինչպես հնում, այնպես էլ այսօր հայ ներուժն ԱՆՄԻՋԱԿԱՆ կերպով կեղեքում ու հայ հոգեբանությունն այլասերում են հենց այս աշիրեթական կառույցները:
……
Ծանոթ.- *Կարելի է կռահել այն սին արդարացումները, որ առաջ կքաշի մեր քաղաքական վերնախավը այս առումով. "Քրդացած հայ թոռունները կազմակերպչական ջիղ ունեցող մարդիկ են…" (և այլն): Հակիրճ նշենք, որ բոլորովին համաձայն չենք, թե ՀԱՅ-երը իրենց մեջ չունեն այդ որակը, և այն իբր պետք է պարտադիր փնտրել աշիրեթական հոգեբանության մեջ: Չնչին է հույսը, որ մեր քաղաքական ղեկավարությունն իր մեջ կարողանա գտնել անհրաժեշտ հասունություն՝ մոտ ապագայում այս խնդրին տալով ՀԱՅ-երին վայել լուծում:*

*Իհարկե, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր թուրքաբարո կառավարումը ենթադրում է նաև ամենատարբեր մեթոդներով հարվածներ՝ ուղղված առանձին աշիրեթ-կլանային կառուցվածքներին: Սակայն սրանք կատարվել ու այսօր էլ կատարվում են կամ արևմտյան ուժերի (թեկուզ "ռուսական" խողովակներով եկող) ճնշման ներքո, կամ կենտրոնաձիգ իշխանությունը պահելու մղումով. "… **երբ Եվրոպայի մէջ աղմուկ** բարձրացուցին այդ առթիւ, տաճիկ (թուրք, հեղ.) **կառավարութիւնը եւս ուշադրութիւն դարձուց քիւրտերու** (քրդերի, հեղ) **վրայ**… Քիւրտերը տկարացնելու համար կառավարութիւնը կը ձեռնարկէ արշաւանք բեկերու դէմ եւ կը քանդէ անոնց բերդերը… Այս հուժկու հարուածներէն յետոյ… Հայոց Զորի մէկ մասին մէջ*

*քրտական ազդեցութիւնը քանի կ'երթար կը նուազէր, տեղի տալով կառավարական ազդեցութեան: 1870 թուականեն մինչեւ 1905-ը, Օսմանեան կառավարութեան ազդեցութիւնը կը զորանար… կառավարութիւնը* ***նպատակ ՉԷՐ ԴՐԱԾ ի սպառ բնաջնջել քրտական աշիրէթները, ԻՐԵՆՑ ՅԵՂԱՅԻՆ ՎԱՐՔ ՈՒ ԲԱՐՔՈՎ եւ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՎ*** *եւ* ***ոչ ալ*** *հանդէս եկած էր պաշտպանելու իրավազուրկ ռայաները՝… հայերը: Անոր նպատակն էր միայն արգիլել, որ քիւրտերը միանան իրարու հետ, պահել զանոնք բաժան-բաժան, որ շատ զօրաւոր ուժ չներկայացնեն: Բայց զանոնք որոշ իրաւունքներով կ'օժտէր, որպէսզի* ***անոնց միջոցով ՋԱՐՆԷ արդեն արթնցող քրիստոնեայ տարրերը****… այսպէսով երկրի մէջ հաւասարակշռութիւն ստեղծելու նպատակը կը հետապնդէր կառավարութիւնը… տկարացուց Ջաւախի թոռոնները, բայց անոնց տեղը ստեղծեց Նորադուզի Շաքիր աղան եւ Միր-Միէն: Նա ոչնչացուց Թահիր փաշայի տունը, բայց փոխարէնը կեանքի կոչեց եւ զորացուց կարգ մը փոքր եւ իրարմէ անջատ աշիրէթներ…" (Ռուբէն, "…յիշատակները", հ 2, էջ 76-77) :* ***Այո՛, ներկայումս ևս նկատելի եղան որոշ աշիրեթ – կլանային – ցեղական կառույցների հանդեպ հարվածներ, բայց սրանք, ցավոք, ինչպես հնում, միտված չէին սույն պիղծ կառույցներն արմատախիլ անելուն :***

*Իհարկե, նշյալ հարվածների հետ համատեղ բանեցվել ու բանեցվում են նաև գայթակղման և այլ մեթոդներ՝ ընդհուպ մինչև աշիրեթ-կլանների ներգրավումը պետական և այլ ուժային կառույցներում. "… Կառավարութիւնը* ***ստեղծեց ու պահպանեց*** *Հայտարանցի, … Մազրիկցի եւ այլն աշիրէթները, որոնք եթէ անոր հանդէպ, իբրեւ քաղաքական միութիւններ ոչինչ կը ներկայացնէին, բայց ի վիճակի էին հայ ժողովուրդը փճացնել, հիւծել եւ այնպէս նուազացնել անոր թիւը, որ* ***ան չկարենար ունենալ իր ազգային հողամասը*** *եւ ոչ մէկ տեղ մեծամասնութիւն կազմէր… Եւ որպէսզի զանոնք* ***ավելի կարգապահ ու հնազանդ դարձնէ****, կառավարութիւնը* ***աշիրէթներէն կազմեց ՀԱՄԻՏԻԷ կոչուած զինվորական գունդերը*** *եւ այսպէսով քիւրտերը աւելի կապեց իր հետ: Օժտելով զանոնք պաշտօնական հանգամանքով, դնելով անոնց ուսերուն վրայ պսպղուն ուսադիրներ ու հագցնելով զինուորական համազգեստներ, Սուլթան Համիտը տեսակ մը* ***սանկցիա կու տար*** *(կը վաւերացներ) հայերու նկատմամբ քիւրտերու իւրացուցած իրաւունքներուն…" (Ռուբէն, "… յիշատակները", հ 2, էջ 77-78) :* ***Ներկայումս "Համիդիե" գնդերին համարժեք խմբավորումների հատուկ կորիզը մեծամասամբ կազմավորված է "ասֆալտի ֆիդայիներից" կամ նմանատիպ մաուզերիստ - արկածախնդիրներից և հանցագործ աշխարհի "երնելի" ու աներնելի թափթփուկներից :***

*Վերոնշյալում պղծությունը ոչ թե տակտիկայի մեջ է, այլ՝ բուն էության, այն է՝ քրդացված գործոնի բանեցումը ի հակադրություն հայկականի,* ***կամ որ նույնն է՝ մարմնավորն ընդդեմ ՀՈԳԵՎՈՐԻ:*** *Այո՛, ցավալի է, որ ներկայումս Հայ պետականության անվան ներքո հայ օրգանիզմը քաղաքականից մինչև կենցաղային հարթություն թեկուզ ինքնաբուխ կերպով ստացել է օսմանյան - թուրանական դիմագիծ (սրանից էլ հայ իրականության մեջ ներկա տարատեսակ ճգնաժամերը՝ մշակութային, քաղաքական, հասարակական – իրավական, տնտեսական, կենցաղային և այլն ) :*
*Հայ Ազգային օրգանիզմում ժամանակ առ ժամանակ վերաճող նմանատիպ "հերոս" - մաուզերիստ կերպարներին է նկատի ունեցել Զորավար Նժդեհը՝ նշելով նրանց խիստ վնասակար ազդեցությունը սույն օրգանիզմի հանդեպ. "… Անհնարին է զուգահեռներ անցկացնել…* ***այն ժամանակվա հայդուկների ու հետո եկած մաուզերիստների*** *միջեւ՝ առանց հիանալու առաջիններով եւ խորապես նողկալու վերջիններից "(Գ. Նժդեհ, "Նշխարներ", Երևան, 2002, էջ13) :*

*Սույն անառողջ երևույթի տարածման առումով իրենց թերացումն ունեն նաև հայ մտավորականը ու առավել ևս՝ հայ հոգևորականը, որոնք մինչ օրս այդպես էլ չկարողացան **հասարակական հնչեղությամբ** հիմնավորապես արժևորել մաուզերիզմի ու ֆիդայության **արմատական տարբերությունը**՝ չնայած նրանց արտաքին դրսևորումների նմանությանը: Խնդրի նրբությունը այն է, որ նշյալ մաուզերիստների **ՈՐՈՇ** հատվածը ևս մասնակցել է հայ ազատագրական պայքարին՝ տրված լինելով արկածախնդրությանը, բախտախնդրությանը, կամ լավագույն դեպքում, տվյալ պահի տրամադրության ազդեցությանը: Սակայն նրանց մտահոգևոր մակարդակում բացակայել (այժմ էլ բացակայում) է Հայ Հոգևոր Էության ու Հայ Ազգային Գաղափարախոսության **արմատական նստվածքը**: ԵՎ սա պատճառ է դառնում շատերի համար "տարօրինակ" համարվող երևույթին. "... Ինչպե՞ս կարող է նույն անձը, որը ինչ- որ ժամանակաշրջանում մասնակցել է հայության պայքարին՝ հանուն Հայաստանի, հանուն հայ ազգի... հետագայում հենց ինքը դառնալ գործիք՝ քայքայելու հայրենիքն ու ազգային օրգանիզմը ..." : Պետք է ասենք, որ այստեղ չկա ոչ մի զարմանալու բան, այլ կա ցավալին... Ռուբենի լեզվով ասած՝ նմանները ոչ թե գաղափարին են նվիրված, այլ առավել գործողությանը՝ արտաքին-մակերեսային երևույթներին. "... երեւան եկած էր նաեւ մի այլ դաս, որին չէր պակսի քաջութիւնը, բայց կը պակասէին խելքն ու դաստիարակութիւնը: Սրանք **կոյր գործիք** էին անոր, որ **առաջինը զիրենք ձեռք կ'առնէր**: Սրանցից է որ երբեմն **պատահական հերոսներ կը ծնին, բայց սրանք էլ կարող են դառնալ զարշելի ոճրագործներ** ... Սրանցից էր Ալիզբոնանի Մուքոն ... Նրան տեսանք Սուլուխի կռվում, պէտքական զինուոր ... Ֆետայիների շրջանակում կը ջանար գերազանցել բոլորն իր լավ գործերով: Սահմանադրութիւն է. Մուքոն զինաթափ է ... Նրան կը հետաքրքրեն ձին ու զէնքը: Եւ ահա ձի ու զէնք կ'առաջարկեն Քոսորի քիւրտեր ... Մուքոն կ' ընդունի, **կը դառնայ քիւրտ դոլամ** ... այնքան հավատարիմ որ պատուհաս դարձավ իր ընկերների եւ հայ ժողովուրդի գլխին ... Պիտի ասէք՝ որտեղի՞ց որտեղ ... որովհետեւ կար դաս մը, որին կը հետաքրքրէր **ոչ թէ գործի նպատակը, այլ գործողութիւնը ինքը** : Մուքոն այս տիպերից էր եւ այս պատճառով է որ նա թռաւ նահատակութիւնից դահճութեան" (Ռուբեն, "...յիշատակները", հ6, էջ 61 - 62): Այո՛, այսօր ևս ի հայտ են եկել նոր մուքոներ, որոնք թեկուզն ինչ- որ դրվագներում մասնակցել են Արցախյան գոյապայքարին, սակայն՝ չեն խորշում հայ ազատամարտի գաղափարին ու էությանը հակադիր այս քրդացած աշիրեթ – կլանային կառույցներում (նաև նմանատիպ "ախպերական" շրջանակներում) ներգրավվելուց : Սրանք, տրվելով շվայտ կյանքի ("ձի ու զենք") ծանծաղ հաճույքներին ներկայումս դարձել են տիպիկ "ՔՈՒՐԴ ԴՈԼԱՄ" - ներ : Խնդիրը ոչ միայն աշիրեթ կառույցներում ներգրավվելն է, այլ այն, որ վերջիններս հնի նմանությամբ **պատուհաս են դարձել հայ ժողովրդի գլխին** :*

*Սա հետևանք է հոգևոր խեղման ու Հավատքի գիտությունից զուրկ լինելուն : Խորհրդային շրջանում ևս ճշմարտապես **չախտորոշվեց** սույն երևույթը, տուրք տալով բռնատիրության պահանջներին՝ "արկածախնդիր - մաուզերիստ" անվանվեց գրեթե ամբողջ հայ ազգային հեղափոխական հոսանքը, որի բազմահազար ներկայացուցիչները ոչ թե պահի ազդեցության տակ և այս կամ այն դրվագներում, այլ իրենց **գաղափարականությամբ ու ամբողջական նվիրյալ կենսագրությամբ** (շատ դեպքերում՝ չարքաշ, տառապյալ) ակամա ժխտել էին մաուզերիզմն ու արկածախնդրությունը: Վերոնշյալ հոգևոր հիվանդության ախտորոշման թերացումն էր պատճառը, որ Արցախյան գոյամարտի ժամանակաշրջանում ու առավել ևս նրանից հետո Հայաստանում*

*ձևավորվեց մառուզերիզմ՝ արժեզրկելով **ՖԻԴԱՅՈՒ** սրբազուն համարումը (սրանից էլ բխող բոլոր բացասական ածանցումներով) :*

***Իհարկե, խոսքը Արցախյան պատերազմին մասնակցած ազատամարտիկների հիմնական զանգվածի մասին չէ, որը համառորեն տոկաց բոլոր դժվարություններին ու հերոսաբար հաղթեց անարգ թշնամուն :***

……..

Այո՛, պատմական Թուրքահայաստանը և ներկա անկախ Հայաստանը օրինաչափված են, ահա թե ինչու ԵՐԿՈՒ դեպքում էլ այս “անհնազանդ” ՀԱՅ-երի բնական ու ինքնաբուխ պահանջը **ՄԵԿՆ** է՝ հայերին տալ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: Այո՛, 20-րդ դարի սկզբնական շրջանում այս հիմնահարցն էին իրենց առջև դրել հայ ազգային ուժերը, բայց աշխարհաքաղաքական մեծ ցնցումները (առաջին աշխարհամարտ) ոչ միայն ի չիք դարձրին այս ծրագիրը, այլև ավելին՝ երիտթուրքերը, “ծերացած” թուրքերի ու քրդական աշիրեթների հետ համատեղ, կատարեցին հայերի ցեղասպանություն: Իհարկե, ներկայումս ցնցումներն արտաքնապես հանդարտ բնույթ են կրում, այն է՝ ՀՈԳԵՎՈՐ ցեղասպանություն (թեկուզ հավանական է, որ այն անցյալի նման գլոբալ կերպով ծրագրավորված չէ, սակայն սրանից դրական առումով ոչինչ չի փոխվում):
Իսկ հայերը թե անցյալում, թե այսօր ցեղասպանության փաստի առջև են կանգնել, քանզի այդպես էլ չունեցանք այն կանխարգելող կառույցը՝ Հայ Ազգային Պետությունը:

Այստեղից էլ՝

**4) Հաշվի առնելով պետական կառույցում միջին օղակի հույժ կարևորությունը (ամուր ու բովանդակալից կառուցված միջին օղակ-ողնաշարն է, որ պատմության մեջ ՀԱՐԹԵԼ է թե վերևից՝ գլխից, թե ներքևից եկած, մեղմ ասած, հնարավոր ոչ ճիշտ դրսևորումները՝ ամենատարբեր ոլորտներում)՝ անհրաժեշտ է հայ պետականության միջին օղակը ՀԱՅԿԱԿԱՆՈՐԵՆ կազմակերպելու և այն ՀՈԳԵՎՈՐ շնչով լցնելու ծրագիր կազմել: Հաշվի առնելով, որ ներկայումս վերին օղակը կայացման ու սևեռուն հսկողության տակ է գտնվում հզոր ու դեռ Հոգևորապես չկայացած օտար ուժերի կողմից (նկատի ունենանք, որ այս երևույթը դեռ շատ երկար կտևի), պետք է միջին օղակ ներմուծել Հոգևոր-ազգային կադրեր (քիչ է արհեստավարժ լինելը)՝ բջիջ առ բջիջ իրար հետ փոխկապակցված:**
**4/ա. Նույն գործունեությունը պետք է ծավալել ազգային կառույցների (կուսակցություն և այլն) ՄԻՋԻՆ օղակներում՝ սրանով իսկ ստեղծելով ամուր ազգային միջին օղակ:**
**4/բ. Վերոնշյալ գործընթացները առավել արդյունավետ ծավալելու համար անհրաժեշտ է դրանց զուգակցումը 2-րդ ենթավերնագրում տեղ գտած ծրագրի հետ:**

…….

Ծանոթ.- *Հիշենք, որ պատմության մեջ շատ դեպքերում պետության ճակատագիրը վերին օղակից (թագավոր ևն) առավել որոշել են պետական և ազգային ՄԻՋԻՆ օղակում հանդես եկող ուժերը. Հայաստանում՝ ՎԱՐԴԱՆՆԵՐԸ (Վարդանանք), Սասանյան*

*Պարսկաստանում՝ հազարապետ միհրներսեհները, Ռուսաստանում՝ ստոլիպինները (իր համակիր կադրերով)…*

……..

Միայն հայկականորեն կազմակերպված պետական և ազգային ՄԻՋԻՆ օղակն է, որ սկիզբ կդնի ԻՍԿԱԿԱՆ Հայաստանին: Փորձենք նկատել պատմության օրինաչափությունները թեկուզ ԱՅԼ դիմակով ու ԱՅԼ հարթության մեջ: Այս առումով ուշագրավ է հայտնի ֆիդայի Սասունցի Մուշեղի հուշերից հետևյալ հատվածը. "… Ռուբէն մեծ դեպքերու կը սպասէր. **Ռուսաստանի մէջ խլրտումներ սկսած էին արդեն**… Ահագին հայութիւն հաւաքուած էր Արարատեան դաշտի մէջ: Հայաստանը ՓՈՔՐ էր… **լավագոյն հողերի վրայ նստած էին թուրք ու թաթարը**, երբ անդին… հարիւր հազարավոր հայեր… կը մահանային… Այդ գիշեր էր, որ Ռուբէն մեզի բացատրեց **հայութիւնը իր պապական հողերուն վրայ տեղաւորելու մեծ եւ ճակատագրական ԾՐԱԳԻՐԸ**: Այդ գիշեր, Խնուսի բերդի իր անշուք սենյակի մէջ, Ռուբէն հիմը կը դնէր **ԻՍԿԱԿԱՆ Հայաստանին**, ավելի ճիշդը՝ ապագայի համար շունչ կու տար անոր… Հեռու էինք Ռուբէնէն, սակայն մեզի համար սրբութիւն էին իր պատվերները…" (Ռուբեն, "…յիշատակները", հ 7, էջ 102): **Մի՞թե հայ արգանդը այլևս չի ծնելու ԱՆԴՐԱՆԻԿ - ներ, ՆԺԴԵՀ - ներ, ԳԵՎՈՐԳ ՉԱՌԻՇ - ներ, ԱՐԱՄ - ներ, ՌՈՒԲԵՆ - ներ՝ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՅԱԾ Աստծո գիտությամբ ու հայ պատմությամբ՝ այս պայքարը տանելու դեպի ՀՈԳԵՎՈՐ հարթություն**:

Շատերը պիտի ասեն, որ այսօր այլ է իրավիճակը. առկա են ողբերգրական պայմաններ՝ ընդհանուր նահանջ, շփոթ, և Տարոնական (ազգայնական-պատմամշակութային) օրգանիզմը հայերիս մեջ **"ցրտահարված" ու հիվանդացած** է և նման ծրագրերի կատարումն անհնարին է, երբ **փոթորիկն ու հոգևոր սովն** է տիրում հայ իրականության մեջ և այլն, և այլն: Սակայն այս առումով հայ պատմությունը հստակ մեկ պատասխան ունի. եթե հայն իր հոգում Աստված ունի, այսինքն՝ եթե հայը՝ **ՀԱՅ** է , ապա նրա համար չի եղել անհնարին ոչինչ՝ յուր ազգի հարատևմանը նվիրված պայքարի մեջ (թեկուզ նահանջի ճանապարհներին): Սա է ազդարարում Հայոց Պատմության հերոսական կանչը (այս առումով ևս ռուբենների աչքերով դիտարկենք անցյալի ու ներկայի օրինաչափությունները և փորձենք լսել նրանց խորհուրդները ներկայի տեսանկյունից). "… Խնուսէն մեր ընդհանուր նահանջը տեղի կ'ունենար ողբերգրական պայմաններու տակ: Մեզի հետ կար 60 - 70 հազար ժողովուրդ, մեծ մասամբ Տարօնէն: Ցուրտն ու հիւանդութիւները աւեր կը գործեն … Մեր նահանջի ճամփուն վրայ, քիւրտեր եւ թուրքեր արգելիքներ կը յարուցանեն, կարծես մեր ցաւը բաւական չըլլար: Այս պարագան արտակարգ խանդավառութեամբ կը լեցնէ մեր կռուողները: Որտեղէն որ կ'անցնէինք մաքրագործումը կ'ըլլար կատարեալ … Ճամբու ընթացքին տեղի ունեցած կռիւները պատճառ դարձած են որ վերակազմի Սասունցիներու այն գունդը, որ, ինչպէս նախորդ կռիւներուն հետագային ալ ճակատագրական դեր մը պիտի ստանձնէր: Գունդին գլուխը կը գտնուին, ինծի հետ, Չոլոն, Մօրուք Կարապետը, Մխիթար Դարմանեանը, Փեթարայ Մանուկը, Պալանթացի Միհրանը, Իսրոն, Ախոն, Կարօ Սասունին եւ այլն:

Այդ օրերուն Անդրանիկն ու Սմբատը կը նահանջեն դէպի Ալեքսանդրապոլ… Անդրանիկ կ'ուզէ տեսնուիլ մեզի հետ … Անդրանիկ հետաքրքրուած է հասկանալու, թէ ո՞ւր կը տանինք այս **70. 000** ժողովուրդը: Իրեն կը բացատրենք որ Ռուբէնի հրահանգով պէտք է որ գրաւենք Ալագեազի շրջանը եւ ժողովուրդը պատսպարենք գիւղերուն մէջ: Անդրանիկ կը պատասխանէ մեզի, որ դժուարին ծրագրի մը իրականացման յանձնառու եղած ենք: Անիկա կ'ըսէ, որ Ալագեազին տէր դառնալու համար պէտք է գրաւել Թալինի բերդը … Անդրանիկին կը պատասխանենք, որ **ուրիշ ճար չունինք. այս ժողովուրդը կամ պիտի թաղենք ձիւներուն մէջ եւ կամ անոր գլուխ դնելիք տեղ մը պիտի ճարենք** … Ռուբէն մեզի տուած էր յարձակման **ընդհանուր յատակագիծ մը**… Հակառակ գիշերուան ցուրտին ու պահ մը սկսած փոթորիկին, արշալոյսին կը յաջողինք հասնիլ Ալագեազի լեռնաշղթան … Թալինի բերդը ռազմական բացառիկ նշանակութիւն ունէր մեր փոքր երկրին համար, անիկա ոչ միայն կ'ի՛շխէր Էջմիածնի եւ Աշտարակի, այլ նաեւ տեւական սպառնալիք մըն էր Երեւանի համար: Հետագային երբ Սարտարապատի կռիւները տեղի ունեցան, **այն ատեն միայն** հասկցուեցաւ մեր շարժման կարեւորութիւնը … Երեք թեւով առաջացող մեր ուժերը ճշգրիտ կերպով կը գործադրեն տրուած հրահանգները: **Բոլորն ալ գիտեն որ այլեւս նահանջելիք տեղ չէ մնացած: Ալագեազը կամ պիտի դառնայ Տարօնի ժողովուրդին գերեզմանը եւ կամ տեղաւորման կայանը**: Այս գիտակցութեամբ ալ միահամուռ հուռայով մը կը յարձակին մեր առիւծները: Առաջին թափով, ուղղակի խրամներուն վրայ կատարուած այս խիզախումը կը շշմեցնէ թշնամին … Մօրուք Կարապետը եւ Հզոն կը յաջողին խորտակել Թալինի բերդին երեք հսկայ դուռներէն մէկը … Իրիկուան դէմ ամբողջ Ալագեազը մաքրուած է թշնամիներէն: Ժողովուրդը հետզհետէ կը սկսի հասնիլ ու տեղավորվիլ …"(Ռուբէն, "… յիշատակները",հ 7, էջ 103 - 107) :

Մի՞թե այսօր չենք ունենա նոր իսրոներ, փեթարա մանուկներ, ախոներ, կարոներ և այլ "անանուն" հերոսներ, որոնք, թեկուզ առանց համալսարանական դիպլոմների հստակ գիտակցեն, որ այսօրվա հայ ներազգային կառուցվածքում "Ալագյազ…" բնագծերը համարժեք են ներկա պետական և ազգային միջին օղակին և այն պետք է հայկականացնել (**իհարկե, գործունեության հարթությունը և մեթոդները փոխված**), որպեսզի… Տարոնական-հայկական շունչը հաստատվի "հայ" ներկա օտարաշունչ ներաշխարհում: Իսկ որպեսզի հայկական շունչ առնի ներկայիս "Ալագյազը", այո՛, անհրաժեշտ է գրավել թուրքացած "Թալինի բերդը" (ձևով հայ, բայց բովանդակությամբ փուչ, օտարաշունչ, թուրքացած "հոգևոր" արժեքային համակարգը)՝ վերջինիս "տարածքում" ներարկելով ՀԱԳ – ը (Տարոնական շնչով) և ՋՏՎԱԾ Քրիստոնեությունը :

Այո՛, այսօր ևս պետք է վերակազմվի նորօրյա "Սասունցիների գունդը", այսինքն՝ անհրաժեշտ է ստեղծել Հոգևոր – Տարոնական շնչով լեցուն ու հայ ներաշխարհը (հոգին) թուրքացած արժեքներից սրբագրող **մշակութային կառույց**: Չպետք է նույնիսկ **ոչ մեկ վայրկյան իզուր կորցնել** մեր նորահաստատ պետության կառուցման ու ՀՈԳԵՎՈՐ սովի ու հիվանդության ճիրաններում հայտնված հայ օրգանիզմի վերականգնման գործընթացում: Իհարկե, նշյալ գործունեության ծրագիրը, որ ներկայացրել ենք այս աշխատության մեջ, ունի զուտ

ստրատեգիական ուղղվածություն ու ընդհանրական կառուցվածք (**հատակագիծ**), և այն կարիք ունի բաժանվելու և **առավել լայն ու ընդարձակ** գծագրվելու արդեն իսկ տակտիկական հարթության մեջ: Պետք է սույն հայաշունչ ծրագրով ընթանալ, քանի դեռ չի սրբագրվել Հայաստանի բնակչության (նաև ամբողջ հայության) **ներկա դիմագիծը՝ արհեստական կերպով ստեղծված**: Չշփոթվենք ու թյուրիմացությունների մեջ չընկնենք, եթե աջից ու ձախից ճամարտակության սիրահար "վարժապետ-մանկամիտների" ու դեմագոգների կողմից հնչեն հետևյալ խոսքերը. "… հիմա ուրիշ է… մեր (միատարր) երկրի մեջ ենք…" : Իհարկե, **ներկայումս մեզ քչերը կհասկանան**, բայց մենք ճշմարիտ գնահատականը միայն սպասենք Ազգից, նրա սրբագույն պատմությունից ու Աստծուց, ուրիշ որևէ մեկի ձեռքը մեր օրագիրը հանձնելու խնդիր չունենք: Ինչպես հնում, այնպես էլ այսօր պետք է **խորապես ըմբռնենք, թե ինչպիսի ճակատագրական և կարևոր նշանակություն ունի** մեզ բաժին ընկած գործընթացը՝ առավել ևս ներկայիս ՀՈԳԵՎՈՐ-մշակութային հեղափոխական հարթության վրա."…Սովն ու հիւանդութիւնը աւեր կը գործեն՝ մեր նորահաստատ պետութեան մէջ …Պետք էր տեղաւորել այդ ժողովուրդը …տեղաւորել որքան կարելի էր շուտ : Իւրաքանչիւր վայրկեան բազմաթիւ կեանքեր կ'արժէին ու յետոյ ժամանակը դժուար թէ ուրիշ առիթներ հայթայթէր նման աշխատանքի մը համար :

Ռուբէն այդ օր մեր առջեւ դրաւ գործունեութեան ամբողջ ծրագիր մը. **աւելի լայնն ու ընդարձակը**՝ ինչ որ պարզած էր Խնուսի մէջ: Սեղանի վրայ փռած էր իր նշանաւոր քարտէսը, որուն վրայ յետին մանրամասնութեամբ նշանակուած էին Հայաստանի գիւղերն ու քաղաքները՝ իրենց ունեցած բնակչութեան տեսակներովն ու այլազանութեամբը … -- Հայաստան ունեցանք, կ'ըսէր Ռուբէն, սակայն ատիկա առայժմ տկար ու ապրելու հնարաւորութիւններէ զրկուած մանուկի մը կը նմանի… ինչ որ մտահոգիչ է ապագայի համար, ատիկա Հայաստանի **բնակչութեան ներկայ դիմագիծն է, արուեստական կերպով ստեղծուած**: Ապա ցոյց կու տար քարտէսին վրայ շրջաններ, ուր թուրքն ու թաթարը եկած տեղաւորուած էին … Այս անարդարութիւնը պէտք է վերջ գտնէր, Հայուն երկիրը, Հայուն հողը պէտք էր իր ժողովուրդի զաւակներուն սեփականութիւն դառնար… որպէսզի իրաւունք ունենայինք ըսելու, որ երկիր ունինք ու աւելի վստահութեամբ նայելու ապագային վրայ : Մօտաւորապես ասոնք էին Ռուբէնի խօսքերը այդ օր : Սակայն մենք գործնական հրահանգներու կը սպասէինք. գիտէինք որ Ռուբէն խոսքերով գոհացող չէր : ՈՒ ահա անիկա կրկին նայեցաւ իր քարտէսին վրայ : Տեսանք որ մատը շրջան կ'ընէ՝ Ճղնի ձորի … Պէօյուք Վետիի ընդարձակ տարածութիւններու վրայ … Փեթարացի Մանուկի ձեռքը ուժով մը իջաւ Չոլոյի ուսին : Մանուկ ըսել կ'ուզէր, որ հասկացած են ու կարելի է մեկնիլ այլեւս … Պետք է, ըսաւ Ռուբէն, … մեր գաղթականութիւնը տեղաւորել այդ շրջաններու մէջ , սակայն առանց աղմուկի … Ազգային Խորհուրդը շուտով կը վերածուի Խորհրդարանի. խոսքի սիրահարները, ինչպէս ամեն տեղ, մեր երկրի մէջ ալ պիտի ըլլան … Եթէ գործի ընթացքին աջէն ու ձախէն խանգարողներ ըլլան, համբերող եղէք, -- … Գիտեմ որ

այդպէս է, սակայն ազատ ենք, մեր երկրին մէջ ենք ըսելով, թիւրիմացութիւններու մէջ չիյնանք, այս է կարեւորը … **Քիչերը կ'ըմբռնէին մեզ ժամանակին, հիմա ալ քիչերն են, որ կ'ըմբռնեն մեզ**. այս կէտն ալ մի մոռնաք …

Ճղնի ձորի յաջողութենէն ետք, Ռուբէն թոյլ չտուաւ մեզի շունչ քաշել, հրահանգեց անմիջապես … Իմ մօտիկ ընկերներէս Ախոյին, Չոլոյին, Մօրուք Կարապետին երբեք չէի տեսած այդ վիճակի մէջ : Ո'չ յոգնութիւն կար, ոչ դադար … **Ցայտնի էր, որ բոլորն ալ լաւապէս ըմբռնած էին թէ ինչ ճակատագրական եւ կարեւոր գործ մը վստահուած է իրենց** " (Ռուբէն, "…յիշատակները",հ 7 էջ 109 - 112) :

## 4. ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՈՒԽՏԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ (ՋՏՎԱԾ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ) ԴԱՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՋԵՏԵՂՎԱԾ

Պետք է նկատի ունենալ, որ այսօր հոգևոր սպանությունն ուղղված է հայության քիչ թե շատ կենդանի մնացած վերջին բեկորներին, որոնք, գիտակցաբար կամ անգիտակից, ներառել են իրենց հոգու մեջ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՈՒԽՏԸ՝ "Իմացյալ մահը Անմահություն է" խորհրդով: Թուրքահայաստանում Մամիկոնյան ՈՒխտի շունչն իր մեջ առավել կրում էր ՏԱՐՈՆ աշխարհի ՄՈՒՇ և ՍԱՍՈՒՆ գավառների հայ ազգաբնակչությունը՝ իր արիաշունչ ֆիդայիների շուրջ բոլորած:
Իզուր չէ, որ Զորավար Գարեգին Նժդեհը և Դոկտ. Հայկ Ասատրյանը Հայ Ազգային Գաղափարախոսությունը հենում են Տարոնականության վրա :
Տարոնականության առաջնորդները ակնկալում էին հոգևոր տկարությունն իր մեջ հաղթահարած մի նոր սերունդ՝ **ՎՏԱՆԳԻ ՍԵՐՈՒՆԴ** (վտանգը զգացող, կռահող և այն կանխող սերունդ), որը Մամիկոնյան հրաշունչ ռազմիկներից կսովորեր՝ **"ԱՊՐԵԼ ՈՒ ԳՈՐԾԵԼ ՄԻԱՅՆ ԱՅ'Ն ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԺԵ ՄԵՌՆԵԼ, ԵՎ ՄԵՌՆԵԼ ԱՅ'Ն ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԺԵՐ ԱՊՐԵԼ"("Տարոնի Արծիվ", 1938թ., թիվ 2, էջ 43) :**

**Այո', ՄԱՀ կա, որ ԿՅԱՆՔ արժե, այսինքն՝ ԵՐԿՈՒՍԸ իրար հավասարազոր են և նյութապաշտ կյանք կա, որ մահվան բովանդակությունն ունի (վերջին երկուսն էլ իրար են հավասարազոր)** : Ահա թե որտեղ է արմատը հայ հերոսականության, որն ՎԱՐԴԱՆԻ խոսքերով դրոշմված է հայ պատմության մեջ."գիտակցված մահը **Անմահություն է**" : Այսօրվա հայ իրականությունը ծարավ է հենց այս իմաստությամբ լեցուն ՎՏԱՆԳԻ ՍԵՐՈՒՆԴԻՆ:
Միաժամանակ, Տարոնական ոգու առաջնորդները սահմանում են այն հատկանիշները, որոնք պարտադիր են ցեղի անունից հանդես եկող հայ անհատների ու կազմակերպությունների համար.
ա/ Ցեղի և Հայրենիքի համար մեռնելու բացարձակ կամք,
բ/ Ցեղային հավիտենականի խոր զգացում,
գ/ Ներցեղային բարոյական,
դ/ Հաղթողական ոգի,
ե/ Պատմական ճակատագրի խոր ճանաչողություն,
զ/ Հայրերի գործերի և նպատակի հաղորդություն,

է/ Հայրենազգացություն,
ը/ Օտարությունը որպես գերագույն դժբախտություն ապրելու առաքինություն,
թ/ Մեծագործության կամք ու բարոյական

* * *

Իհարկե, Տարոն հասկացությունը հենց այնպես չի դրված հայապահպանությանն ու հայրենատիրությանը ձգտող վերոնշյալ ուսմունքի մեջ : Ահա թե ինչ է այս մասին ասում Նժդեհը.”Ճի՛շտ է, սուրբ է հայրենի երկրի ամեն մի բուռ հողը, սակայն ճիշտ է եւ այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմա - ռազմագիտական տեսակէտից ամենակարեւոր ու ամենանուիրական երկրամասը, **ուր ցեղը ամենէն շատ արիւն է թափել, մշակութային գանձեր դիզել, հերոսական պատմութիւն ստեղծել**…Ճակատագրօրեն մեծ է Տարօնի նշանակութիւնը մեր Ցեղի եւ Հայրենիքի պաշտպանութեան համար” …”Տարօնականութիւնն է մեր ցեղային նկարագրի **յաղթական գիծը**…”(Գ. Նժդեհ, “Հատընտիր”, Երևան, 2001 թ., էջ 344), “Տարօնականութիւնը հայ ցեղի հոգե-բարոյական այն ոյժն է, որով դիմազծված է մեր պատմական անցյալը”(Հ. Ասատրյան, “Հատընտիր”, Երևան, 2004, էջ 89), “Տարօնականութիւն - դա միայն բարոյական պատգամ չէ, այլեւ կարելիապաշտական իմաստասիրութիւն, անցաւորը յաւիտենականին հիւսելու իմաստութիւն եւ ճակատագրի առեղծուածները Աստուծոյ խորհրդով լուծելու կամեցողութիւն”(նույնը՝ էջ 109) :

## Հիրավի մեծ է հայ պատմության մեջ Տարոնի դերը՝ որպես

**- Հայ ազգային օրգանիզմի ու հայ պետականության ձևավորման կորիզ,**
**- Հայ Հոգևոր Հավատի կենտրոն (թե նախաքրիստոնեական, թե ներկա՝ ծածկագրյալ Քրիստոնեության շրջանում) ,**
**- Հայ Հոգևոր Հավատի ինքնատիպ անաղարտության կերտող (արևելյան և արևմտյան աղանդավոր մշակույթների միջև Հոգևոր - ազգային յուրօրինակ իմունոլոգիական արտահայտիչն էր Տարոնը՝ տես Մաշտոցյան Թարգմանչաց շարժում) ,**
**- Հայոց մշակույթի պահպանող (այս առումով իրենց կարևոր տեղն ունեն Մեսրոպյան հայոց գրերի գյուտը և Խորենացու “Հայոց Պատմություն”-ը),**
**- Հայոց Ասպետական ու Հոգևոր - Ռազմական հոգու հայրենաշունչ - ազատասեր խառնարան (Մամիկոնյանց տոհմի բնօրրան) :**
**- Տարոնն է եղել ծայրահեղ բևեռների (արևմտամետ՝ հռոմեասերներ և արևելամետ՝ պարսկամոլներ) բաժանված հայ քաղաքական քայքայիչ կողմնորոշումներին դիմագրավողը՝ ՏՈՀՄԻԿ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ որդեգրողը (իհարկե, չժխտելով դիվանագիտական ճկունության ձիրքերը, տե՛ս պարսից Շապուհ արքայի խոսքերը՝ ուղղված իր կողմից ուխտադրուժ կերպով բանտարկված Վասակ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ և վերջինիս պատասխանը՝ Շապուհին) :**
**- Տարոնի ծնունդ են ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ երկու հզորագույն ՍՅՈՒՆՆԵՐԸ՝ Մաշտոցն ու Խորենացին :**
**- Տարոնում է ստեղծվել “Սասնա Ծռեր” էպոսը (հայեցի Աստվածաշունչը) :**
**- Իզուր չէ, որ Մեծ Հայքի շրջաններից միայն Տարոնին է վիճակվել պատիվը՝ կոչվելու ՀԱՅՈՑ ՏՈՒՆ …**

**- Վերջապես Հայկական էության պոռթկման վերջին վերածնունդի բախտորոշ շրջանում առավել քան Տարոնում էր, որ ձևավորվեցին հայ սրբագույն ֆիդայիների ինքնատիպ, անկրկնելի ու անհունորեն հայեցի կերպարները:**

Տարոնական հզորագույն էության հմայքն էր պատճառը. "**...** որը կրելու, **ՄԱՄԻԿՈՆՅԱՆ** կոչվելու համար ՝ **աշխարհակալ** Բիւզանդիոն հայազգի կայսրերը իրենց ծագումն էին **կեղծում** ..."(Գ. Նժդեհ "Հատընտիր", էջ 298 : Ընդգծումները- հեղ.) :

*Ամենախորին խոնարհման ու մեծագույն պատկառանքի է արժանի այն, որ հայոց պատմության մեջ գրեթե չի եղել հայ ազատագրական պոռթկում այս կամ այն բռնակալության դեմ՝ առանց Մամիկոնյանների գլխավորությամբ (մինչև Մամիկոնյան տոհմի անճիտումը՝ հաշվենկատ թշնամյաց կողմից) : Այո՛, Սրբագույն մի տոհմ (**Տարոնական էության պահապանը**), **որը թվում է, թե ուներ ամեն բան, ինչ այսօր կոչում ենք բարեկեցիկ "կյանք" (դեռ ավելին՝ շատ դեպքերում հզոր զահակալ հազկերտները նրանց թագ էին խոստանում՝ զորշ հնազանդության դիմաց)** , բայց Աստված, Հոգևոր, Հայրենիք, Հայկականություն և այլն արժեքները լոկ բառեր չէին ՆՐԱՆՑ համար, այլ սույն արժեքները Տարոնական էությամբ լեցուն Մամիկոնյանց հոգում դառնում էին Երջանկության մի հզոր **ՏԱՃԱՐ**, դեպի ճշմարտությունը մղիչ ուժ և հենց ԻՆՔԸ՝ **ճշմարտությունը** :*

*Ներկայումս բազում թուրքաբարո հայեր (առավելապես վերնախավից) չքմեղացած շեշտում են, թե անհնար է հարստության կամ իշխանության գայթակղմանը դիմագրավել, թե բոլորն էլ, միևնույն է ուշ, թե շուտ դառնում են ... սա ասում են իբրև իրենց արմատական այլասերմանը "արդարացում" : Սակայն, "հայե՛ր", այստեղ միայն բառերը չէ, որ պիտի խոսեն. թերթեք հայոց պատմության արյունոտ ու սրբագույն էջերը. ձեր առջև է կանգնած ոչ թե մեկ - երկու, այլ առնվազն Մամիկոնյան տոհմի ողջ ՈՒԽՏՅԱԼ ԶՈՐԱՍՅՈՒՆԸ՝ սերունդ առ սերունդ (զորավար, թե այլ պետական կամ մշակութային գործիչ և այլն)՝ որպես մեկ լուսարձակող հայելի, որի արտացոլանքի մեջ, այո՛, ձեր սմքած հոգու ՄԱՀՆ է, որ չե՛ք ուզում տեսնել : Սակայն ու՞մ եք խաբում՝ հայ ամբոխի՞ն, ինքներդ ձե՞զ՝ միգուցե ... Ազգի՞ն՝ երբեք, ԱՍՏՈՒՈ՞Ն՝ առավել ևս ... Իսկ թե որքան գրող կարժենա հիվանդությունից մեռնող մարդու **ինքնախաբեությունը** (բժկվելու փոխարեն), դրան կպատասխանի ազգի մոտալուտ ու թեկուզ ապագա պատմագրությունը և առավել ևս՝ ԱՍՏՈՒԱԾԸ : Իհարկե, վերջին իրադարձությունից պարզ է, որ շատերը պատկերացում իսկ չունեն, թե ինչի մասին է խոսքը (բացի միստիկական պատումներից), սակայն սրանից դրական առումով ոչինչ չի փոխվելու :*

*Հայության համար Գերխնդիրը պիտի լինի պարզելը, թե այդ ո՞ր ակունքի վրա են հաստատված եղել ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՏՈՀՄԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ, թե այդ ո՞ր Հոգևոր կոչված սննդից են հոգեպես հիրավի հզորացել ու բյուրեղացել այս տոհմի ներկայացուցիչները : Եթե՝ ՈՒԽՏԻ (երդման) շնորհիվ, ապա ո՞րն է եղել սույն ՈՒԽՏԻ "էներգակիր" առանցքը ...*

Ահա թե ինչու դեռ 1915 թ. սկզբից թուրքերը, քուրդ աշիրեթների հետ համատեղ, առաջին հերթին իրենց նենգ ու լայնածավալ հարվածն ուղղեցին հենց այս շրջանների դեմ: Նույնիսկ այս առումով առկա է Թուրքահայաստանի և ներկա Հայաստանի օրինաչափությունը, այն տարբերությամբ, որ եթե 1915-16 թթ. Թուրքահայաստանի վերոնշյալ գավառների Հայերը հիրավի անհավասար կռվում սպանվել, հյուծվել ու թմրել էին ՄԱՐՄՆԱՎՈՐ առումով, ապա այսօր "Տարոնական" հայերս ՀՈԳԵՎՈՐԱՊԵՍ ենք սպանված կամ հյուծված (որը, մեղմ ասած. բնավ հարգելի չէ) : Այս ՅՈՒՐՕՐԻՆԱԿ օրինաչափության մեջ համոզվելու

համար բերենք ևս մեկ հատված մեզ ծանոթ հուշերից. “…Սասնոյ եւ Տարոնի կռիւները տեւեցին մօտաւորապէս եօթ ամիս… ցուրտին, անօթութեան, հազարաւոր թուրք եւ քիւրտ ուժերու դէմ կռուելով ժողովուրդն ու անոր ղեկավարութիւնը անկարելին փորձած էին ու սպառված այլեւս… ՈՒ ահա… ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ էին նստած ժողովրդի ներկայացուցիչները եւ հայ ֆետայիները: Բոլորն ալ **հիւծած** երեւոյթ ունէին. **շատերս զիրար ՉԷԻՆՔ ճանչնար** այլեւս… Լուռ ենք բոլորս ալ ու գլխահակ: Ոմանք **կը ՄՐԱՓԵՆ** իրենց նստած տեղը: Ռուբէնն է դարձյալ, որ կը խզէ լռութիւնը.- **ՔՆԱՆԱԼՈՒ ժամանակ կունենանք, կըսէ, դառն հեգնանքով**, ո՛վ որ ըսելիք մը ունի **թող ըսէ՛**…” (Ռուբեն, “…յիշատակները”, հ 7, էջ 82-83 : Ընդգծումները – հեղ.) :
Այո՛, այսօր ևս թուրքացած ու քրդացած հոսանքների հարվածներից մենք (Արցախյան զարթոնք ապրածներս), որպես ՀԱՅ, այնքան ենք հյուծվել, որ “**շատերս զիրար չենք ճանչնար**”:

Թույլ տվեք բոլոր դարերում իրենց ՀԱՅ լինելը պայքարով հաստատած ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻ անունից դառնից էլ ԴԱՌԸ հեգնանքով “անհամեստորեն” դիմելու ներկա քիչ թե շատ դեռ հոգևորապես կենդանի մնացած, բայց “ՄՐԱՓՈՂ” հայությանը. “**ՔՆԱՆԱԼՈՒ” ժամանակ դեռ կունենանք... ով որ “ԸՍԵԼԻՔ” ունի, թող այն արտահայտի** … այլապես թուրք - անասնացած հոսանքներին հանձնելով՝ Տարոն աշխարհի՝ **Մուշի, Տալվորիկ-Խուլբ-Խիանքի, Իշխանաձորի, Փսանքի, Գելիեզուզանի, Շենիկ-Սեմալի, Աղբիի, Քեփիի, Անդոկի, Ծովասարի, Ծիրնկատարի** և այլն բնագծերը, այսօր արդեն իսկ կթուրքացվի ու կոչնչանա նաև Տարոնի **ՎԵՐՋԻՆ** բնագիծը, այն է՝ քիչ թե շատ դեռ հայ մնացածներիս հոգում գործող **ՏԱՐՈՆԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ** : Խորապես ընկալենք, որ սա ՀԱՅ - Տարոնականության իր նշանակությամբ 3-րդ՝ վերջին և ամենավճռական ու օրհասական ճակատամարտն է:

**Առաջինը**՝ 7-րդ դարում, երբ արտագաղթը սկսեց զանգվածային բնույթ ստանալ, երբ իզուր անցավ հայ արի ու հոգևորաշունչ Տոհմի՝ Մամիկոնյանների, վերջին փորձը՝ համահայկական շարժումով կասեցնել օտար, ավարառու, մահաշունչ, պիղծ ու զինյալ փոթորիկը՝ այս անգամ արաբական անապատներից եկող, երբ լքված հայ իշխանների գերակշիռ մասից Տարոնի դարպասի առջև ՀՈՒՍԱՀԱՏ մաքառումի մեջ հերոսաբար ընկավ Մամիկոնյան վերջին սպարապետը (Տիրանը)՝ հավատարիմ մնալով Մամիկոնյանց ՈՒԽՏԻՆ (երդմանը).”Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի եւ մեր ազգի համար, եւ **թող մեր աչքերը չտեսնեն** մեր սրբարանների … ոտից կոխան լինելն ու պղծվելը …”(Ղեւոնդ, “Պատմություն”, Երևան, 1982թ., էջ 119):

**Երկրորդը**՝ 20-րդ դարասկզբին, երբ Տարոնի ազգաբնակչությունը, Մամիկոնյանց ՈՒԽՏԻ շնչով մահ կամ ազատություն գոչելով և նվիրյալ ֆեդայի Չոլոյի պատկերավոր խոսքով՝ “մեկ ու կես ֆշանկով” զինված, **բացարձակ** անհավասար գոտեմարտի ելավ դարավոր, անկոչ ու նենգ թշնամու դեմ, երբ Մամիկոնյանց արյունն ու շունչը արդեն իսկ ուժաքամ, զինասպառ հայ ֆեդայիների (Փեթարա ախոների) լեզվով մեկ ծրագիր էր հուշում՝ մեծ խարույկ վառել ու խորովվել նրա մեջ՝ չտեսնելու համար հայ բնօրրանի պղծումը (տե՛ս Ռուբեն, “…յիշատակները”, հ7, էջ 83) :

Եվ **ԵՐՐՈՐԴԸ**՝ ներկան … *սա վերջը*, կամ նոր սկիզբն է հինավուրց ու նոր հայության: Այս **ԳԵՐԽՆԴԻՐՆ** է դրված ամեն մի հայի առջև , ՈՎՔԵՐ դեռ …

Այսօր մեր կարգախոսը պետք է լինի. “**Քանի դեռ ՈՒՇ ՉԷ տիրանալ ու տիրապետել ՀՈԳԵՎՈՐ զենքին**”: Քանզի ինչպես նկատեցինք Թուրքահայաստանում 1908-1914թթ “դեմոկրատական” շրջանում հայ կառույցները (ներառյալ ՀՅԴ որոշ զգալի հատված) տրվելով թուրքերի “ազատամիտ” ու “հայամետ” կեղծ դիրքորոշումներին՝ կազմալուծվել, քաղքենիացել ու զինաթափվել էին, այնպես էլ ներկայումս՝ սովետաբռնապետական ապազգային ժամանակաշրջանում քիչ, թե շատ ձևավորված հայ ազգայնական շրջանակները տրվելով ներկա սնամեջ ազգային լոզունգներին և իբր “հայեցի” մթնոլորտին (իրականում անդեմ և հոգևոր լիցքից, պատմազգացումից, գաղափարական հենքից ու հիրավի հայկական դիմագծից զուրկ “ազգային մշակույթին”՝ երգ ու պարին (և այլն), որոնք վերածվել են էժանագին “տաշի-տուշի”-ների կամ ժամանակակից շոուների)՝ ևս կազմալուծվել, քաղքենիացել ու գրեթե լիովին անտեսել են հայ հոգևոր զենքերը (հոգևոր ինքնապաշտպանությունը). “… 1908 Իթթիհատական **սահմանադրութիւնը մեծագոյն աղետը** եղավ հայ ժողովրդի համար: Ֆետայիներն ու Ռուբէնը զգացած էին կանուխէն այս պարագան, սակայն ընդհանուր տրամադրութիւնը եւ դեպքերը կը պարտադրէին … Գարմէնի տնտեսական եւ քաղաքական ծրագիրը շատ ընդարձակ էր եւ օգտակար, սակայն… Հետզհետէ դժգոհութիւնները կը շատանային … Հին ֆիտայիներու դիտողութիւնն այն է, որ **ինքնապաշտպանութեան գործը երեսի վրա կը ձգուի: Ամէն մարդ լծուած է իր տնտեսական վիճակը բարելաւելու աշխատանքին** : **Այլեւս զենքի մասին մտածող չկար**: Շատերը նոյնիսկ իրենց զենքերը կը ծախէին՝ …”(Նույնը՝ հ7, էջ 55 - 56) : Այո՛, այսօր ևս շատերը այնքան են քաղքենիացել, որ իրենց ունեցած քիչ, թե շատ հայ մշակութային **ինքնապաշտպանության** արժեքները հանել են վաճառքի: Եթե հնում (մարմնավոր հարթության վրա) այս երևույթը ինչ-որ կերպ կարելի էր “արդարացնել”, ապա այսօր՝ **ԱՆՆԵՐԵԼԻ Է:**

Իհարկե, ինչպես հնում, այնպես էլ այսօր ազգայնաշունչ շատ հայեր դյուզ իսկ վստահություն չունեն՝ ո՛չ եղած “դեմոկրատական – լիբերալ” կարգերից իբր սպասվելիք հայկականության հզորացման հույսերի, ո՛չ էլ “հայ” քաղաքական դաշտում սպրդացող շատ ու շատ դեմքերի հանդեպ, ո՛չ … Սակայն չէին սպասում ընթացող դեպքերի նման գահավիժմանը (մասնավորապես՝ անսպասելի էր ներկայիս հայության նմանատիպ արագությամբ հոգեսպանությունը ու այլասերումը)՝ սրա համար էլ անփութորեն առավել ուշադրությունը կենտրոնացրել են ժողովրդի տնտեսական ու կրթական բնագավառում ընթացող քիչ, թե շատ մխիթարիչ “զարգացման” վրա՝ անտեսելով բուն հիմնախնդիրը (հոգևոր վարակամերժ ինքնապաշտպանությունը). “…Սահմանադրութեան յաջորդող տարիներուն. Զաւարեանը, Գարմէնը եւ Տոքտ. Զավրիեւը, իրենց գործունէութեան ընթացքին, վստահութիւն չունէին ո՛չ ազատութեան վրայ եւ ո՛չ ալ կառավարութեան, **սակայն չէին կրնար պատկերացնել, որ այդքան կանուխ կը հասնի 1915 – ի աղետը** : Այդ պատճառով ալ, կը ջանային օգտուիլ ազատութեան ընձեռնած առիթէն ու բարձրացնել ժողովուրդի տնտեսական եւ կրթական վիճակը” (Նույնը՝ էջ 56):

**Շատ կարևոր է նկատել, որ այս ամենի մեջ ներկան անցյալի հանդեպ ունի նաև իր յուրօրինակ և խիստ տագնապալի տարբերությունը, եթե հնում՝ մարմնավոր ասպարեզում, սպասվելիք մահաբեր վտանգը դառն էր, արյունալի ու ցավոտ, ապա հոգևոր հարթության մեջ ՄԱՀԸ շատ դեպքերում արտահայտվում է քաղցր ու տենչալի (այստեղից էլ ներկայումս վտանգի զգացողության խիստ պակասը) :**

Թևաթափության չէ, որ կոչում է մեր անցյալը, այլ եռանդուն գործի ու անկոտրուն խոյացումների.” … Մեր առաջին գործը եղաւ Մշոյ դաշտի բոլոր գիւղերուն զենքերն ու կռուողները արձանագրել, ստուգել անոնց վիճակը … Ամեն միջոց ի գործ կը դնէինք, որ ժողովուրդ զինուի … Սակայն կարճ էր ժամանակը, 1915 – ը շուտ հասաւ ու մեր ինքնապաշտպանութեան պատրաստութիւնը կիսատ մնաց : Այսուհանդերձ կարելի եղաւ որոշ դասաւորում մտցնել: Այժմ երբ տարիներ անցած են, կը մտածեմ, թէ **արդյօք տարբեր պիտի չըլլա՞ր մեր ճակատագիրը, եթէ Ռուբէն ավելի կանուխ գար Երկիր՝ ինքնապաշտպանութեան գործով** … Ռուբէն այդ օրերուն յաճախ կը ջղայնանար, աւելի վճռական միջոցներ կը թելադրէր. կը նախազգար գալիք վտանգը. կրակի վրայ նստած էր կարծես” :
Այս բոլոր աղետալի օրինաչափություններով հանդերձ այսօր մենք ունենք մեկ շատ կարևոր մխիթարություն, եթե հնում՝ մարմնավոր հարթության մեջ հայերը՝ ռուսական, հունական, անգլիական և այլն զենքերի վրա էին իրենց ինքնապաշտպանության հույսերը կապում, ապա հոգևոր հարթության մեջ մեզ լիովին բավ է հայկականը՝ առավելապես ստրատեգիական զենքերը (ՀԱԳ-ը և ՋՏՎԱԾ Քրիստոնեությունը) .”…1914 – ի կէսերուն քաղաքական կացութիւնը սկսաւ կնճռոտիլ : Ռուբէնի նախատեսութիւնը իրականութեան կը վերածուեր :

**Ժողովուրդն ալ զգաց փոթորիկին մոտենալը, ուզեց զինուիլ, սակայն ուշ էր արդեն** …” : Այո՛, միայն թե այս անգամ էլ ՉՈՒՇԱՆԱՆՔ, այլապես այս թերացումը թերևս վերջինը … “Այս բոլոր որոշումները կարելի չեղաւ լրիւ գործադրութեան դնել, քանի որ ՈՒրբաթը Շաբաթէն կանուխ եկաւ … Այս պարագան Ռուբէն մասնաւոր սուրհանդակով իմաց տուաւ մեզի … թերեւս կարիք ըլլայ շուտով **Դաշտի ժողովուրդը բարձրացնել Սասուն** … Ռուբէն Սասուն հասնելուն, անմիջապես հրահանգեց ՀԻՆ ֆիդայիներու եւ իշխաններու ժողու գումարել :

**Այս պատմական ժողովին ներկայ էին**, -- … “(Նույնը՝ հ7, էջ 58 - 62) :

ԺԱՄՆ Է ԵԿԵԼ նկատելու, որ Մամիկոնյանց ՈՒԽՏԻ առանցքը կազմում է ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ դավանաբանությունը, որը օրինաչափվում է Նոյի ԵՐՐՈՐԴ որդու՝ ՀԱԲԵԹԻ (ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ արմատը), ՀԱՅԿ նահապետի ԵՌԱԹԵՎ նետի, Սասունցի Դավթի ԵՐՐՈՐԴ՝ սպանիչ հարվածի և այլ ՀՈԳԵՎՈՐ առանցք պարունակող հայ դասական արժեքների հետ (տե՛ս ԿՅԱՆՔԻ ԳԻՐՔ, էջ 77 - 87 ) : Միայն թե այսօր վերոնշյալ ազգապահպան արժեքները ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ լուսաբանումով պետք է ԾԱԾԿԱՁԵՐԾՎԱԾ մատուցել հասարակությանը: Ժամն է, որ Տարոնականության պահպանման համար վերածննդի կոչվի Մամիկոնյանց տոհմը, եթե ոչ գենետիկ ակունքներով, ապա, որն առավել կարևոր է, էաբանական հիմքի վրա, այսինքն՝ ձևավորել Մամիկոնյանց ՈՒԽՏԻ և ԿՅԱՆՔԻ ԳՐՔԻ դավանաբանության շուրջ համախմբված մեկ հավաքականություն: Սա է եղել Մամիկոնյանց ռազմավարության տեսլականը:

Իզուր չէ, որ դեռ հնուց հայ իշխանների կողմից (նույնիսկ նրանց՝ ովքեր նեղ անձնական հաշիվներից մղված հակամետ էին Մամիկոնյաններին) նկատված էր, որ Հայաստան աշխարհում առանց ՄԱՄԻԿՈՆՅԱՆ տոհմի որևէ գլոբալ հարց չի լուծվել. "… Հայոց մեծ սպարապետ ու Մամիկոնեից տեր Վարդանի և իր եղբայրների՝ պալատով, ազգուտակով հանդերձ՝ Հայոց աշխարհից գնալու այս խորհուրդը հայտնեցին Սյունյաց իշխան Վասակին… Իմացան նաև Հայոց բոլոր տանուտերերն ու սեպուհները, որոնք դրանից կոտրված սրտով սարսափեցին: Ամենքը, որ իրենց անձերի փրկության նախանձախնդիր էին, մտածում էին, թե արդեն կորան իսպառ և ոչ մի հնար չունեն այս չարից ազատվելու, **քանզի բոլորն էլ գիտեին ու հասկանում էին, որ Հայոց երկրում դեռ գլուխ չէր եկել որևէ գործ կամ նախաձեռնություն առանց այն տոհմի առաջնորդության**… " (Ղ. Փարպեցի, "Հայոց պատմություն", Երևան, 1982թ, էջ 133-135):

Առավել քան ներկայումս գերհզոր պետությունների կողմից ձևավորված գլոբալ աշխարհաքաղաքական կառուցվածքի մեջ հայերիս համար կարևոր է ըմբռնել սույն իրողությունը. "**Հայոց պատմութեան փիլիսոփայութեան ծանօթ ու հայրենազգաց ամեն մտավորական հայ կխոստովանի, որ Մամիկոնեանների Հայաստանը – թէկուզ յաճախ կիսուած, կիսաանկախ, կիսակործան - աւելի հայկական է, աւելի հայրենիք, եւ աւելի պաշտամունք պարտադրող**, քան էր նույնը՝ Տիգրան Աշխարհակալի կամ Արտաշէսի օրով…" (Գ. Նժդեհ, "Հատընտիր", 2001, էջ 328):

Պատմության խավար մրուրը այս էլ քանի անգամ չարագուշակ բվի նման ճչում է. "Սև ու սպիտակ ջարդերով պիտի չվերջանա՞ հայ ազգը": Սրան ի պատասխան լսվել ու լսվում է ԵՂԻՇԵՆԵՐԻ խորախորհուրդ գոչյունը. "Մահ չունի ՀԱՅ ԱԶԳԸ, քանի դեռ ՆԱ չի մոռացել Սուրբ Պատգամը՝ ավելի ու ավելի իմաստն դնել հենց մահվան մեջ":

Առավել ևս մահ չունեն մասնավորապես այն հոգիները, որոնք սահմռկեցուցիչ զարհուրանքներ ապրելիս՝ նորից ու նորից մնում են նախանձախնդիր դեպի իրենց Հոգևոր արմատները:

Միգուցե այսօր լինեն թևաթափ եղած շատ հայեր, որոնք ներկա հայ մեռյալ իրականությունը հոգևոր հարթության վրա համեմատեն Տեր-Զորի անապատի հետ՝ անուղղակիորեն հուշելով հաշտվել աստիճանաբար էլ ավելի աճող անգերեզման ու իրար վրա կուտակված հայ հոգեպես դիակնացած բազմության առկայության հետ: Սակայն Հայոց աննկուն պատմությունը վկայում է . **"Դեր - Զօրի անապատում, իրանց հայրերի եւ մայրերի դիակների շուրջ դեգերող հայ ԱՆՏԷՐ որբերը կեանքի ԱՆԻՄԱՆԱԼԻ խորհուրդների ոյժով կառչած մնացին ցեղի Աստծուն եւ իրանց հարազատների արիւնը ծծած աւազների վրայ գրեցին, իրար սովորեցրին հայկական լոյսի խորհրդանշան այբուբենը**":

Այո՛, այսօր էլ հոգևորապես կենդանի մնացած հայ "որբերս" օտար ու "ազգային" ավազուտի վրա, չխորշելով "հայ" հոգեպես դիակների բազմությունից, մեր

ազգային հոգու անիմանալի ուժականությունից մղված, թեկուզ ավազուտի վրա պիտի “գրենք, իրար սովորեցնենք ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ” ՀԱՅՔ “նահապետի” (ՁՏՎԱԾ Քրիստոնեության) դավանանքը:

**Մահ ՉՈՒՆԻ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ...** Մահվան ճիրաններն են ընկած վերջինիս խորհուրդն իսկ չհասկացած հայության ողորմելի դահիճները (նույնիսկ ողորմության Աստվածային իմաստը այդպես էլ չյուրացրած) :

* * *

“**Վերածնունդ չկա** եւ ոչ մէկ տեղ, ուր կը բացակայի իմացական տառապանք եւ զգացումի խռովք՝ **անցեալը կենդանիօրէն հոգեզծելու եւ դարձնելու ներկայի առաջնորդ**”: (Հ. Ասատրյան, “Հատընտիր”, էջ 86):

“Ազգ մը, որ **անընդունակ է իր անցեալի մէջ որոնել իր ներկայի խորհուրդը եւ ապագայի աստղը**- նման ազգը զուրկ է պատմական զգացումէ, որով՝ **նոր պատմութիւն կերտելու կորովէ եւ հանճարէ**” (Նույնը՝ էջ 90):